

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2019
դեկտեմբերի 19-ի N

թվականի

1886-L որոշման

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ.....	3
ՆԱԽԱԲԱՆ.....	5
1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ.....	16
2. ՏԵՍԼԱԿԱՆ.....	38
3. ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	39
ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	39
4. ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	99
5. ՀԱԾՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ	106

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության առանցքային ճյուղերից մեկն է և հասարակության կեցության հիմքը: Այն նշանակալի է ոչ այնքան և ոչ միայն որպես ոլորտ, որից ստացվում է որոշակի ավելացված արժեք, այլ առաջին հերթին՝ որպես բնագավառ, որի որակի և զարգացման մակարդակից է կախված բնակչության պարենային անվտանգությունը, գյուղական բնակավայրերի կենսամակարդակն ու զարգացման հնարավորությունները, մարդկանց առողջությունն ու անվտանգությունը, բնակության վայրն ու պայմանները, ինչպես նաև բնակչության կյանքի որակն ու տևողությունը:

Ինչպես բոլոր բարիքների արտադրությունը, այնպես էլ գյուղատնտեսությունը պայմանավորված է աշխատանքով, ստեղծարար մտքով և մարդու, բնության ու նորարարության զուգակցմամբ:

ՀՀ կառավարության տեսլականն է առաջիկա տասը տարիների ընթացքում ունենալ շրջակա միջավայրի հետ ներդաշնակ ապրող երջանիկ և բարեկեցիկ գյուղական բնակչություն, բարձրորակ և մրցունակ գյուղատնտեսական ապրանք արտադրող փոքր ու միջին տնտեսավարողներ: Որակապես տարբերվող գյուղատնտեսության ստեղծմանը մասնակից ձեռնարկատիրական գործունեություն ծավալող բոլոր սուբյեկտներին Կառավարությունը կրնձեռի միատեսակ պայմաններ, հավասար հնարավորություններ, արդար մրցակցային և կայուն միջավայր:

Այս տեսլականն իր արտացոլումն է գտել «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության» մեջ (այսուհետ՝ Ռազմավարություն), որտեղ մանրակրկիտ ներկայացված են գյուղատնտեսական քաղաքականության մեջ պետության հիմնական առաջնահերթությունները, սահմանված են առաջնային խնդիրների

շրջանակն ու տվյալ ռազմավարության իրականացման գործողությունների պլանը:

Կառավարությունը քաջ գիտակցում է առաջիկա խնդիրների դժվարությունը և պատասխանատվություն է կրում վերջիններիս լուծման համար այդ նպատակով կստեղծվեն համապատասխան պետական ինստիտուտներ, կկատարվեն համապատասխան օրենսդրական փոփոխություններ, կգտնվեն ֆինանսական ռեսուրսներ (գործարար միջավայրի և դոնոր կազմակերպությունների հետ համատեղ) ռազմավարության մեջ թվարկված միջոցառումներն իրագործելու համար:

Կառավարությունը, որպես բոլոր ուժերն ընդհանրացնող ղեկավար մարմին, պատրաստ է կիրառել հնարավոր բոլոր միջոցները, համագործակցել յուրաքանչյուր անհատի հետ՝ ոգևորելով և հավատ ներշնչելով իր ուժերի ու վաղվա նվաճումների նկատմամբ: Ներդրվելու են բոլոր ջանքերը, որպեսզի գյուղը և գյուղատնտեսությունը այլևս չասոցացվեն աղքատության ու թերզարգացման հետ, այլ դառնան բարեկեցիկ, առողջ և ապահով կյանքի պայման:

ՆԱԽԱԲԱՆ

1. Հայաստանում գյուղատնտեսությունը կարող է դառնալ ժամանակակից, բարգավաճող և դիվերսիֆիկացված տնտեսության առաջնային հիմնասյուներից մեկը: Այն երկրի տնտեսական աճի, բնակչության կյանքի որակի բարձրացման, աղքատության մեղմման, կայուն և բարձր վարձատրվող աշխատատեղերի և ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ստեղծման մեծ ներուժ ունի:

2. Առաջիկա տասը տարիների տեսլականն է ունենալ կայուն զարգացող, նորարարական, բարձր ավելացված արժեք ստեղծող, բնական պաշարների նկատմամբ հոգատար և շրջակա միջավայրի հետ ներդաշնակ, էկոլոգիապես մաքուր արտադրանք ստեղծող և գյուղում բնակվող մարդու բարեկեցությունը երաշխավորող գյուղատնտեսություն:

3. Համընդհանուր բարգավաճման տեսլականի մի մասը ավանդական փոքրածավալ արտադրությունից անցումն է դեպի ժամանակակից, տեխնոլոգիապես հագեցած, շուկայի զարգացմանը միտված և բարձր ավելացված արժեք ստեղծող գյուղատնտեսություն: Այս տեսլականի հիմնասյունը ներառական աճն է, որը կապահովի արտադրական հնարավորությունների հասանելիություն փոքր ձեռնարկատերերի, գործարարների, գյուղական բնակչության և, մասնավորապես, երիտասարդության համար:

4. Այս ամենն իրականացվելու է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մի շարք գործողությունների միջոցով՝ այլ նախարարությունների, միջազգային գործընկերների և քաղաքացիական հասարակության աջակցությամբ:

5. Առաջիկա տասը տարիների ռազմավարական տեսլականի իրականացման համար (2029 թ.) ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը մշակել է երեք տարիների գործողությունների պլան՝ ուղղված գյուղատնտեսական արտադրանքի աճին, գյուղական բնակավայրերի

զարգացմանը և համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի մրցունակության բարձրացմանը:

6. Ռազմավարական փաստաթուղթն արտացոլում է համաշխարհային հոշակագրերն ու ձգտումները, մասնավորապես՝ կայուն զարգացման նպատակները: Այն հիմնված է 2019 թ. ընդունված ՀՀ կառավարության ծրագրի, ՀՀ կառավարության 2019-2023 թթ. գործողությունների ծրագրի, 2020-2022 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի, ինչպես նաև ՀՀ կառավարության նախկին ռազմավարական միջոցառումների իրականացման արդյունքում ձեռք բերված փորձի վրա: Ավելին, փաստաթուղթն արտացոլում է համագործակցության համաձայնագրերում առկա հիմնական կետերը, օրինակ՝ ԵՄ-Հայաստան համապարփակ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA)՝ գյուղատնտեսության զարգացմանը, գյուղատնտեսական վիճակագրությանը և ագրոտուրիզմին վերաբերող կետերը:

7. Հայաստանի գյուղատնտեսությունն ունի մի շարք մրցակցային առավելություններ, այդ թվում՝ երկրի պատմությունը, տնտեսական ինտեգրացիոն գործընթացներում ներգրավվածությունը, ինչը հնարավորություն է ընձեռում արտոնյալ պայմաններով մուտք գործել Եվրասիական տնտեսական միության մեծ շուկա: Որպես առավելություն՝ պետք է նշել նաև գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև փոքր հեռավորությունները, գյուղատնտեսական բարձրարժեք մշակաբույսերի վեգետացիայի երկար տևողությունը և վաղահաս բերքի անեցման համար բարենպաստ ագրոկլիմայական գոտիները, հարուստ գյուղատնտեսական ժառանգությունը (Հայաստանը որպես խաղողագործության և ծիրանի ու կեռասի մշակության հայրենիք) և ամենակարևորը՝ բարենպաստ էկոլոգիական պայմանները՝ բարձրորակ ջուրն ու բարձրադիր տարածքները, որոնք ապահովում են առավել համեղ գյուղատնտեսական արտադրանք:

8. Անմշակ հողատարածքների մասշտաբները (վարելահողերի ավելի քան մեկ երրորդը) և փոքր հողակտորների տարածվածությունը դանդաղեցնում են գյուղատնտեսության զարգացումը և խոչընդոտում արտադրության ակտիվացմանը և ներդրումների ներգրավմանը: Գյուղատնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունի հողի նպատակային օգտագործումը:

9. Հայաստանի աշխարհագրական դիրքի և տարածաշրջանային աշխարհաքաղաքականության, սահմանափակ առևտրային ուղիների ու տրանսպորտային մեծ ծախսերի պատճառով գյուղացիական տնտեսությունները դժվարությամբ են մուտք գործում արտաքին շուկա: Գյուղական վայրերում կրթական մակարդակը ցածր է, ներգրավվածության և զբաղվածության հնարավորությունները՝ սահմանափակ: Ցածր է նաև կոլեկտիվ եղանակով մարտահրավերներին դիմակայելու և համագործակցելու մակարդակը: Մեծ խնդիր է ծերացող և նվազող բնակչությունը, քանի որ վերջին մի քանի տասնամյակներին երիտասարդների արտահոսքը գյուղից դեպի քաղաքային բնակավայրեր, Ռուսաստան և այլ երկրներ կտրուկ աճել է:

10. Գյուղատնտեսության ոլորտում պետք է հաշվի առնել ներդրումների ցածր մակարդակը և տեխնիկական խոչընդոտները: Վերջիններս ներառում են մեքենայացման և ոռոգման արդիական համակարգերի ցածր մակարդակը, գյուղատնտեսական խորհրդատվության թերզարգացած համակարգը, որակյալ ենթակառուցվածքների՝ սառնարանային և պահեստային տնտեսությունների, տրանսպորտային միջոցների սահմանափակ հասանելիությունը, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարական չափանիշների կիրառման և մոնիտորինգի ցածր մակարդակը, ֆինանսների սահմանափակ հասանելիությունը (մասնավորապես՝ ապահովագրություն) և ☐ էկոհամակարգում ☐ մարդկային ռեսուրսի պակասը:

11. Վերոնշյալ բոլոր խնդիրները լուծելի են, սակայն անհրաժեշտ է զգալիորեն ավելացնել պետական, դոնոր և մասնավոր ներդրումների ծավալները, ինչպես նաև մանրակրկիտ որոշել առաջնահերթություններն ու գործողությունների հաջորդականությունը: Սույն ռազմավարությունն այս առումով հստակ ծրագիր է, որտեղ ներառված է նաև գործողությունների պլանը:

12. Սույն ռազմավարությունը **հիմնված** է յոթ սկզբունքների վրա, ինչպես նաև միտված է ներառական աճին, գենդերային հավասարությանը և ինստիտուցիոնալ կայունությանը: Այդ սկզբունքները պետք է վերաժվեն նպատակների և դրանցից բխող միջոցառումների՝ հաշվի առնելով նաև գյուղատնտեսության ոլորտի գերակայությունները.

1) **Ազդեգացում.** աջակցել փոքր տնտեսությունների և մասնատված արժեշտների համախմբմանը՝ չմշակվող հողատարածքների կրճատման և տնտեսավարման ձևերի կատարելագործման միջոցով՝ տնտեսապես առավել կենսունակ գյուղատնտեսություն ունենալու համար,

2) **Առևտրայնացում.** աջակցել արտահանման և մասնավոր հատվածի ներդրումների աճին՝ խթանելով առևտրային գործունեությունը՝ առաջնայնություն տալով բարձրարժեք ապրանքներին և արտահանման նոր բարձրակարգ շուկաներին, շեշտը դնելով բարձր ավելացված արժեքի ստեղծմանը, մասնավորապես՝ ինտենսիվ այգեգործության, ջերմատնային տնտեսության, ագրովերամշակման հումքի արտադրության ճյուղերի զարգացմանը,

3) **Կողմնորոշում դեպի որակ.** կենտրոնանալ հայկական գյուղատնտեսական արտադրանքի որակի բարելավման, մոնիտորինգի և խթանման վրա՝ շեշտը դնելով Հայաստանի շրջակա միջավայրի բացառիկ ռեսուրսների (ջրի, լեռների, էկոլոգիապես անվտանգ գյուղատնտեսության) և հարուստ ու հնագույն սննդի մշակույթի վրա: Զուգահեռաբար մշակել

ավանդական ապրանքների և գինու աշխարհագրական նույնականացման համակարգը, հաստատել հայկական բրենդն ու ապրանքանիշը,

4) Երիտասարդության ներգրավվածություն.

Երիտասարդներին ընդգրկել գյուղատնտեսության զարգացմանն ուղղված բոլոր գործողություններում՝ սկսած քաղաքականության մշակումից մինչև արտադրություն, վերամշակում և մարկետինգային գործունեություն, ապահովել ոլորտի զարգացման քաղաքականության մշակման գործընթացում բարձրորակ մարդկային ռեսուրսների կայուն ներգրավվածություն,

5) Դիվերսիֆիկացում և ռիսկերի կառավարում. նպաստել արտադրանքի և շուկայի դիվերսիֆիկացմանը, ներդնել ռիսկերի կառավարման համակարգ (կարկտապաշտպան և ջրախնայողական համակարգեր, անտառապաշտպան շերտեր, համապատասխան տեխնոլոգիական ներդրումներ, ամբողջական գյուղատնտեսական ապահովագրություն),

6) Կլիմայի փոփոխություններին հարմարվողականություն, դիմադրողականություն և շրջակա միջավայրի կայունություն. իրականացնել կլիմայի փոփոխությունների վերաբերյալ իրազեկման, հարմարվողականության, մեղմացման ռեսուրսների կայուն օգտագործման գործառույթներ (օրինակ՝ բարելավել գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության մոնիտորինգը, կիրառել «խելացի» գյուղատնտեսության փորձը, ինչպես նաև հասունացման տարբեր ժամկետներ ունեցող ու երաշտադիմացկուն սորտերի շրջանացման միջոցով օժանդակել կլիմայի փոփոխություններին հարմարվողականության, տարածմանը), ապահովել գյուղատնտեսության ոլորտի զարգացումը՝ կիրառելով ջրային և հողային ռեսուրսների կառավարման լավագույն փորձը,

7) Տեխնոլոգիաների արդիականացում. ներդրումներ կատարել գյուղատնտեսական ոլորտի թվայնացման ու քարտեզագրման

(աշխարհագրական տեղեկատվական համակարգեր, դրոններ), մեքենայացման, ոռոգման, ջերմատնային տնտեսությունների, ինչպես նաև հետերքահավաքային ենթակառուցվածքների (օրինակ՝ ժամանակակից սառնարանային և պահեստային տնտեսություններ) զարգացման ուղղությամբ, ստեղծել նորարարական տեխնոլոգիաների ներդրման կառուցակարգեր և իրականացնել թվային գյուղատնտեսության ծառայություններ:

13. Գյուղատնտեսության ոլորտի գերակայություններն են՝

1) Հողային բարեփոխում. հողային բարեփոխումը գյուղատնտեսության ոլորտի զարգացման հենասյուներից մեկն է: Գյուղատնտեսական նշանակության հողերը պետք է հասանելի լինեն արտադրողների և գործարարների համար, պետք է խրախուսել ինտենսիվացումը, արտադրողականության բարձրացումը և գյուղատնտեսության ոլորտին առնչվող գործունեության զարգացումը: Սա իր հերթին կներգրավի լրացուցիչ ներդրումներ գյուղական տարածքներում: Համագործակցելով բոլոր շահագրգիռ կողմերի և քաղաքացիական հասարակության հետ՝ Կառավարությունը հետամուտ պետք է լինի հողի շուկայի զարգացմանը՝ իրականացնելով հողերի ճշգրիտ գրանցում և հաշվառում, հողերի մասին նոր իրավական ակտերի ընդունում և անմշակ հողատարածքների կրճատման նպատակով տեխնիկական միջոցառումների (օրինակ՝ հողերի առք ու վաճառքի էլեկտրոնային հարթակ) մշակում: Հիմնական նպատակն է հողերի կոնսոլիդացման միջոցով արագորեն բարձրացնել հողի արտադրողականությունը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ինչպես հողի վարձակալության, այնպես էլ վաճառքի շուկաներին,

2) Արտահանման դիվերսիֆիկացում. գյուղատնտեսության ռազմավարության կարևոր նպատակներից է ապահովել Հայաստանի հաջողությունը Եվրասիական տնտեսական միության շուկայում և

պետական ներդրումների միջոցով բարձրացնել իրազեկվածությունը և կենտրոնացումը արտահանման շուկայի, որակի և դիվերսիֆիկացման վերաբերյալ և մուտք գործել նոր բարձրակարգ շուկաներ (օրինակ՝ ԵՄ, Միջին Արևելք, Ճապոնիա և Հյուսիսային Ամերիկա): Պետական ներդրումները կուղղվեն արտահանման զարգացմանը և, ամենակարևորը, սննդամթերքի անվտանգության ժամանակակից ստանդարտների ապահովմանը, բուսասանիտարական չափանիշների, հավաստագրման արդիականացված համակարգերի ու մեթոդների կիրառմանը,

3) Առևտրայնացում և ավելացված արժեք. արտահանման դիվերսիֆիկացումը (օրինակ՝ պտուղ-բանջարեղենի արժեշղթաներ, գինի, կաթնամթերք, միս և այլն) և ներմուծման փոխարինումը (օրինակ՝ թռչնաբուծության ոլորտում) պետք է իրականացվի պետական աջակցության և ներդրումային ու դրամաշնորհային ծրագրերի միջոցով: Գյուղատնտեսության ոլորտում առաջնային արժեշղթաների և նորարարական բիզնեսի ստեղծման նպատակով պետք է ներգրավել օտարերկրյա ներդրումներ՝ ներառյալ դոնորների աջակցությունը, ագրոբիզնեսի միջազգային և տեղական առաջատար ընկերությունների կողմից մեծածավալ առևտրային ներդրումները,

4) Տեխնոլոգիական արդիականացում և նորարարություն. Հայաստանի գյուղատնտեսության մրցունակությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ընդլայնել ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և արդյունավետ կիրառման բնագավառները: Դա հնարավոր կլինի թվային գյուղատնտեսության ենթակառուցվածքներում (օրինակ՝ գյուղացիական տնտեսությունների ռեգիստր, կենդանիների համարակալման և հաշվառման համակարգ, նախարարության գործունեության և խորհրդատվական համակարգերի թվայնացում) ներդրումներ իրականացնելու միջոցով: Տեխնոլոգիական արդիականացումը (ոչ թվային) պետք է ներառի նորարարական տեխնոլոգիաների ներդրումը գյուղատնտեսության տարբեր

բնագավառներում (օրինակ՝ կարկտապաշտպան և ոռոգման արդիական համակարգեր, նորարարական ջերմատներ և հետքերքահավաքային տեխնոլոգիաներ),

5) Մարդկային կարողությունների և հմտությունների զարգացում. գյուղատնտեսության ոլորտի զարգացման նպատակով անհրաժեշտ են ներդրումներ մարդկային կարողությունների զարգացման և բացահայտման ուղղությամբ՝ գյուղատնտեսության բոլոր հատվածներում և մակարդակներում: Այն պետք է ներառի կրթական և մասնագիտական ուսուցման համակարգի բարեփոխում՝ ներգրավելով երիտասարդությանը, կատարելագործելով գյուղացիական տնտեսավարողների հմտությունները և պատրաստելով հայ գյուղատնտեսների, տեխնոլոգների ու ձեռնարկատերերի նոր սերունդ (օրինակ՝ ջերմատների կառավարման, ագրովերամշակման, գյուղմթերքի մարկետինգի, ֆինանսական և գործարարական հմտությունների զարգացման համար),

6) Գյուղական զարգացում. որպեսզի գյուղական բնակավայրերը դառնան առավել բարեկեցիկ և բավարարեն ոլորտի զարգացման պահանջները, պետք է ներդրումներ կատարել եկամտաբեր գործունեության դիվերսիֆիկացման և զարգացման գործընթացում: Այն պետք է ապահովի գյուղական համայնքների բնակչության երիտասարդ, տնտեսապես ակտիվ հատվածների ներգրավվածությունը գյուղատնտեսության մեջ: Ուստի անհրաժեշտ է ցուցաբերել գյուղական զարգացմանն ուղղված ամբողջական մոտեցում,

7) Ինստիտուցիոնալ կարողություններ. առաջընթացը, ինստիտուցիոնալ շարունակական զարգացումը և գյուղատնտեսական ինստիտուտների կարողությունների հզորացումը կարևորագույն դեր են խաղում քաղաքականության կայացման, բարելավման, իրականացման և վերահսկման համար: Դա վերաբերում է հատկապես նոր համակարգերի ներդրմանը (ներառյալ գյուղացիական տնտեսությունների ռեգիստրները և

վճարման համակարգերը), որպեսզի Կառավարությունը կարողանա առավել արդյունավետ համագործակցել շահառուների հետ: Ներդրված ջանքերի հաջողությունը կախված է քաղաքականություն մշակողների, շուկայի մասնակիցների և տարբեր դերակատարների փոխհարաբերություններից:

14. Ռազմավարության ազդեցությունը տեսանելի կլինի հաջորդ տասնամյակում, իսկ փոփոխություններն ու արդյունքներն ակնհայտ կլինեն հետևյալ ժամկետներում՝ կարճատև (12-18 ամիս), միջին տևողությամբ (3-5 տարի) և երկարատև (5-10 տարի):

15. Գյուղատնտեսության ոլորտում և գյուղական բնակավայրերում առկա կարևորագույն խնդիրների լուծման նպատակով Կառավարությունը ձգտում է կիրառել ռեսուրսների արդյունավետ օգտագործման և գործընկերության համակարգված մոտեցում: Սույն ռազմավարության ուշադրության կենտրոնում է գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության բարձրացումը, սննդամթերքի անվտանգության մակարդակի բարելավումը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, արտահանման ծավալների ավելացումը և արժեշդթաններում բոլոր դերակատարների, մասնավորապես՝ առևտրի վրա հիմնված փոքր գյուղացիական տնտեսությունների, արտադրող խմբերի, վերամշակողների և արտահանողների եկամուտների ավելացումը:

16. Վերոնշյալ գերակայությունները սահմանված են ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական յոթ առաջնահերթություններում՝

- 1) բարձրացնել գյուղատնտեսության ոլորտի մրցունակությունը և արդյունավետությունը,
- 2) ապահովել սննդամթերքի անվտանգությունը,
- 3) բարելավել պարենային անվտանգությունը և սնուցումը,
- 4) զարգացնել տեղական շուկաները և ավելացնել արտահանման հնարավորությունները,

5) զարգացնել մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունները գյուղատնտեսության ոլորտում,

6) աջակցել գյուղական համայնքների կայուն զարգացմանը,

7) խթանել թվային գյուղատնտեսությունը և տեխնոլոգիական նորարարությունները: Վերջիններս փոխկապակցված են և կաջակցեն մյուսներին:

17. Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի շատ սահմանափակումներ տարածվում են նաև այլ ոլորտների վրա: Սույն ռազմավարությունը գիտակցում է գործընկերային հարաբերությունների կարևորությունը և ներառում է եզրափակիչ բաժին՝ ուղղված այլ գործողությունների և գաղափարների իրականացմանը՝ համագործակցելով Հայաստանի այլ գերատեսչությունների, կառավարական կառույցների և նախաձեռնությունների հետ, մասնավորապես բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, ֆինանսների, շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների, Կառավարության այլ մարմինների և ծրագրերի, այդ թվում՝ «Աշխատիր Հայաստան» նախաձեռնության հետ: Ռազմավարության հիմնական թիրախային ցուցանիշները ներկայացված են աղյուսակ N 1-ում և Ձև N 2-ում:

Աղյուսակ 1.

Հիմնական թիրախային ցուցանիշները

Հ/հ	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2019	2024	2029
1	Մեկ գյուղացիական տնտեսության միջին եկամուտ (դրամ)	0.640 մլն	2.0 մլն	5.0 մլն
2	Գյուղատնտեսությունում տնտեսավարողի աշխատանքի արտադրողականության աճ	3%	+45%	+100%

3	Գյուղատնտեսության ավելացված արժեքի տարեկան միջին աճի տեմպը	-2%	5.50%	7%
4	Անմշակ վարելահողերի տեսակարար կշիռը	45.5%	35%	<25%
5	Գյուղատնտեսական նշանակության հողերի արտադրողականության աճ	-5%	+25%	+103%
6	Ոռոգվող վարելահողերի տեսակարար կշիռը	26%	>35	> 40%
7	Գյուղատնտեսական արտադրանքի և վերամշակված գյուղատնտեսական մթերքի արտահանման ծավալներ	697.7 մլն \$	850.0 մլն \$	>1.0մլրդ \$
8	Գյուղատնտեսական մթերքի արտահանման դիվերսիֆիկացիայի աստիճան (10% ավել արտաքին շուկաներ)	1	2	3
9	«Էկո» գյուղատնտեսական մթերքի տեսակարար կշիռը գյուղատնտեսության համախառն արտադրանքում	0.20%	1 %	> 5%
10	Գլոբալ պարենային անվտանգության ինդեքս	52.3	65.3	75.0

1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

18. Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության կարևոր ճյուղերից մեկն է, որը 2018 թ. դրությամբ ապահովել է ՀՆԱ-ի 13,7 %-ը (822,4 մլրդ ՀՀ դրամ)¹: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2018 թ. կազմել է 892,6 ՀՀ դրամ, որի 46 %-ը (415,5 մլրդ ՀՀ դրամ) ձևավորվել է բուսաբուծական, 54 %-ը (477,1 մլրդ ՀՀ դրամ)՝ անասնաբուծական արտադրանքից²:

19. Ներկայումս ՀՀ բնակչության ավելի քան 36 %-ը (1,07 մլն մարդ) բնակվում է գյուղական բնակավայրերում: Վերջին տարիներին այս ցուցանիշը նվազման միտում ունի, մասնավորապես՝ 2014-2019 թթ. գյուղերում բնակչության թիվը նվազել է 3 %-ով կամ 30,8 հազարով:

20. Գյուղատնտեսության ոլորտի զարգացմամբ է պայմանավորված ինչպես գյուղական համայնքների, այնպես էլ սննդի արտադրության արժեշտայում զգալի մասնաբաժին ունեցող այն ենթաճյուղերի զարգացումը, որոնք հիմնվում են տեղական գյուղատնտեսական արտադրանքի վրա և ունեն արտահանման բավական մեծ ներուժ: Այդուհանդերձ ոլորտի արտահանման ծավալները ներկայումս բավական ցածր են: Մասնավորապես՝ 2018 թ. արտահանման ընդհանուր ծավալի մեջ ագրոպարենային ոլորտի մասնաբաժինը կազմել է ընդամենը 28.9 % (697,7 մլն ԱՄՆ դոլար)³: Գյուղատնտեսության համախառն արտադրանքում (892,6 մլրդ ՀՀ դրամ, 2018⁴) արտահանման մասնաբաժինը կազմել է մոտ 7,8 %: Այնուամենայնիվ պետք է փաստել, որ վերջին տարիներին գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալները և վերջինիս մասնաբաժինն արտահանման ընդհանուր ծավալներում որոշակիորեն աճել են: Միաժամանակ հարկ է նշել, որ Հայաստանում ագրոպարենային

¹ https://www.armstat.am/file/article/sv_03_19a_112.pdf

² https://www.armstat.am/file/article/sv_12_18a_122.pdf

³ https://www.armstat.am/file/article/sv_12_18a_411.pdf

⁴ https://www.armstat.am/file/article/sv_12_18a_411.pdf

արտադրանքի ներմուծման ծավալները համեմատաբար ավելի մեծ են: Մասնավորապես՝ 2018 թ. ներմուծման ընդհանուր ծավալում ագրոպարենային արտադրանքի մասնաբաժինը կազմել է 16,2 % (804,4 մլն ԱՄՆ դոլար): Ռազմավարական նշանակություն ունեցող գյուղատնտեսական որոշ արտադրատեսակների գծով այս իրավիճակը կարող է բացասաբար ազդել երկրի պարենային անվտանգության վրա, քանի որ այդ արտադրատեսակների գծով ինքնաբավության մակարդակը զգալիորեն ցածր է: Այդ արտադրատեսակների թվին են պատկանում մասնավորապես ցորենը (33,2 % ինքնաբավության աստիճան, 2017 թ.), խոզի միսը (58 % ինքնաբավության աստիճան, 2017 թ) և թռչնի միսը (22,5 % ինքնաբավության աստիճան, 2017 թ.)⁵: Գյուղատնտեսական արտադրանքի ներմուծման բարձր տեսակարար կշռի պատճառներից են Հայաստանում գյուղատնտեսության ցածր արտադրողականությունը, ներքին սպառման համեմատաբար փոքր շուկան, սեզոնայնությունը, գնային ցածր մրցունակությունը ներմուծված արտադրանքի նկատմամբ, որոշ դեպքերում՝ նաև որակական հատկանիշների անհամապատասխանությունը սպառողների պահանջներին: Իսկ գյուղատնտեսական արտադրանքի արտահանման հիմնական խոչընդոտներից են Հայաստանի շրջափակումը հարևան երկրների կողմից, որն առաջացնում է լոգիստիկ դժվարություններ՝ ավելացնելով միավոր արտադրանքի վրա կատարվող ծախսեր, իսկ որոշ դեպքերում՝ նաև նվազեցնելով որակական հատկանիշները:

21. Ներկայումս գյուղատնտեսական արտադրանքի՝ շարունակաբար զարգացող ներքին և արտաքին շուկաները ներագրում են Հայաստանի արտադրողների վրա՝ առավել արդյունավետ կառավարելու գյուղատնտեսական արտադրությունից մինչև իրացում ամբողջ արժեչղթան և վերահսկելու գյուղատնտեսական արտադրանքի

⁵ http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__7%20Food%20Security/FS-1-2017.px/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6

արտադրական շղթայի յուրաքանչյուր փուլն ու գործընթացը, ինչը կնպաստի արտադրանքի որակի, ավելացված արժեքի բարձրացմանն ու արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը:

22. Գյուղատնտեսական արտադրանքի արժեքի ավելացման, արտահանման խթանման, ինչպես նաև միջազգային շուկայում մրցունակության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ապահովել գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը ոչ միայն որպես հումք՝ առաջնային վիճակում, այլև ապահովել վերջինիս արժեքի ավելացումը և ստեղծել վերամշակված վիճակում արտահանելու հնարավորություն:

23. ՀՀ գյուղատնտեսության ոլորտն ունի զարգացման հսկայական ներուժ, սակայն ոլորտում առկա մարտահրավերներն ու խնդիրները թույլ չեն տալիս օգտագործել ոլորտի զարգացմանը նպաստող բոլոր հնարավորությունները: ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները (SWOT վերլուծությունը) ներկայացված են Ձև N 1-ում: Գյուղատնտեսության ոլորտի զարգացման մարտահրավերներն ու խնդիրներն են՝

1) Արտադրողականության և արդյունավետության ցածր մակարդակը. ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ռեսուրսների օգտագործման արդյունավետության մակարդակը բավական ցածր է: Այդ է վկայում գյուղատնտեսության արդյունավետության, մշակաբույսերի բերքատվության և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ցուցանիշների համեմատությունը զարգացած գյուղատնտեսությունն ունեցող երկրների համապատասխան ցուցանիշների հետ:

Այսպես, եթե Հայաստանում գյուղատնտեսությունում 1 զբաղվածի տարեկան արտադրողականությունը (ստեղծված ավելացված արժեք) 2018 թ. դրությամբ կազմել է 5,393 ԱՄՆ դոլար, ապա Դանիայում այդ ցուցանիշը 2018 թ. կազմել է 62,894 ԱՄՆ դոլար, Իսրայելում՝ 2017 թ. 94,454 ԱՄՆ դոլար:

1 կովի տարեկան կաթնատվությունը Հայաստանում կազմում է 2,615 կգ⁶, այնինչ ԵՄ երկրներում միջին ցուցանիշը 7,000 կգ է. մասնավորապես՝ Դանիայում 9,569 կգ, Իսրայելում՝ 12,000 կգ⁷:

Հայաստանում ցորենի բերքատվությունը 2018 թվականին կազմել է 28 ց/հա⁸, որը շուրջ 6 ց-ով պակաս է համաշխարհային միջին ցուցանիշից՝ 34 ց/հա⁹:

Ցածր արտադրողականության և ռեսուրսների օգտագործման ցածր արդյունավետության պատճառները բազմաթիվ են՝ ավտոմատացման, ժամանակակից տեխնոլոգիաների և նորարարական լուծումների ներդրման ցածր մակարդակը, ընդլայնված վերարտադրության և արժեշդթայի հզորացման դեռևս սուղ հնարավորությունները, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և մասնատվածությունը, խոշոր գյուղացիական տնտեսությունների ոչ բավարար քանակությունը, մասնագիտական գիտելիքների, արդյունավետ գյուղատնտեսական լուծումների և հնարավորությունների բացահայտման ու կիրառման հմտությունների պակասը և այլն:

2) Գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվառման, մշակման և երկրորդային շուկայի զարգացման խնդիրներ, մշակվող հողերի ցածր տեսակարար կշիռը. Հայաստանում առկա 445,6 հազ. հա վարելահողերից 2018 թվականին նպատակային օգտագործվել է ընդամենը 242,8 հազ. հա կամ շուրջ 54,5 %, որը բավական ցածր ցուցանիշ է այսպիսի սակավահող երկրի համար: Գյուղատնտեսական հողերը չեն մշակվում բազմաթիվ պատճառներով՝ ռոտզման ջրի անհասանելիություն կամ անբավարար մատակարարում, գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման անմատչելիություն, հողի բերրիության ցածր մակարդակ, հողօգտագործողի կամ հողի սեփականատիրոջ բացակայություն, ցածր

⁶ https://www.armstat.am/file/article/sv_12_17a_122.pdf

⁷ <http://www.moag.gov.il>

⁸ https://www.armstat.am/file/article/29_gt_2018.pdf

⁹ <https://data.oecd.org/agroutput/crop-production.htm>

եկամտաբերություն, անհրաժեշտ շրջանառու միջոցների անբավարարություն և այլն:

Հայաստանում գյուղատնտեսական հողերի ոռոգումը դեռևս ոլորտի կարևորագույն խնդիրներից մեկն է: Մասնավորապես՝ 2018 թվականի տվյալներով Հայաստանում ոռոգվող է համարվում գյուղատնտեսական նշանակության հողերի 154.9 հազար հեկտարը, որը կազմում է գյուղատնտեսական նշանակության հողերի ընդամենը 7,6 %-ը: Ընդ որում՝ ոռոգվող վարելահողերը և բազմամյա տնկարկները կազմում են մշակվող վարելահողերի և բազմամյա տնկարկների 31,9 %-ը:

Ներկայումս չունենալով գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն՝ խնդիրներ են առաջանում ինչպես օբյեկտիվ պատճառներով չօգտագործվող կամ ոչ նպատակային օգտագործվող վարելահողերի՝ գյուղատնտեսական շրջանառության մեջ ներառումը խթանող գործուն կառուցակարգեր մշակելու և ներդնելու, այնպես էլ ներդրողներին անհրաժեշտ հողատարածքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու գործում:

Ոլորտի խնդիրներից է ոչ միայն ոռոգման համակարգերի հասանելիության, այլև վերջիններիս արդյունավետ կառավարման ցածր մակարդակը: Մասնավորապես խնդիրը ոչ այնքան ջրային պաշարների պակասն է, որքան վերջինիս ճիշտ բաշխման կառուցակարգերի բացակայությունը, օրինակ՝ ոռոգման առավել արդյունավետ և ժամանակակից համակարգերի կիրառությունը:

Իհարկե, վերջին տարիներին որոշակի տարածում են գտել ոռոգման ժամանակակից համակարգերը, սակայն դրանց կիրառումն այնքան լայնամասշտաբ չէ, որպեսզի դրանց արդյունավետությունը տեսանելի լինի:

Գյուղատնտեսական հողերի մշակման ցածր արդյունավետության և չմշակման հիմնական պատճառների շարքին են դասվում նաև հողի սեփականատիրոջ բացակայությունը երկրից կամ զբաղվածությունն այլ ոլորտում, ոռոգման ջրի բացակայությունը և բարձր սակագինը, հողերի

մասնատվածությունը և փոքր չափերը, դեպի վարելահողեր տանող ճանապարհների ոչ բարվոք վիճակը կամ բացակայությունը և այլն:

Որպես երկրի տնտեսության ռազմավարական կարևորություն ունեցող ոլորտ՝ ՀՀ գյուղատնտեսության արտադրական ներուժի օգտագործման, ինչպես նաև հողօգտագործման արդյունավետության մակարդակը դեռևս ցածր է: Դրա հիմնական պատճառը գյուղացիական տնտեսությունների փոքր չափերն են, ինչը խոչընդոտում է հողի շուկայի (հատկապես՝ երկրորդային) աշխուժացմանը, ինչպես նաև հողային ֆոնդի կառավարմանը ու գյուղատնտեսական արտադրության արդյունավետ կազմակերպմանը:

Այսպիսով՝ Հայաստանում առկա է գյուղատնտեսական հողերի թույլ զարգացած երկրորդային շուկա, որը, այնուամենայնիվ, առանցքային է գյուղատնտեսության զարգացման համար, ինչպես նաև պահանջում է արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքների, այդ թվում՝ ճանապարհների, տրանսպորտային միջոցների և այլնի առկայություն, ինչպես նաև մասնագիտական օժանդակություն (ծառայությունների տեսքով):

3) **Կողմնորոշումը դեպի ներքին շուկա.** Գյուղատնտեսության ոլորտի զարգացման խոչընդոտներից է արտահանման խթանման քաղաքականության և հստակ սահմանված կառուցակարգերի բացակայությունը: Արդյունքում գյուղացիական տնտեսությունները հիմնականում նախընտրում են արտադրանքն իրացնել ներքին շուկայում: Բացի այդ՝ ներքին շուկայում գյուղատնտեսական արտադրանքն իրացնելու համար անհրաժեշտ չեն հատուկ մարկետինգային գիտելիքներ և փորձ, իսկ շուկայական ռիսկերն արտահանման համեմատ շատ ցածր են: ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի շուկան մուտք գործելու մատչելիության տեսանկյունից ամենաազատականներից մեկն է, և ոլորտում քիչ են այն գյուղացիական տնտեսությունները, որոնք արտահանման ուղղվածություն ունեն: Կողմնորոշումը դեպի ներքին շուկա

հիմնականում կապված է այն փաստի հետ, որ միջազգային շուկաներն առավել զարգացող ու փոփոխուն են, պահանջկոտ են ներկրվող արտադրանքի որակի, քանակի, փաթեթավորման, մատակարարման կայունության նկատմամբ, ինչպես նաև պարունակում են արժույթային բարձր ռիսկեր: Հիմնականում հենց այս պատճառների հետ է կապված ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների բավական փոքր աշխարհագրությունը, որն ընդգրկում է Ռուսաստանի Դաշնությունը, Արաբական Միացյալ Էմիրաթները, Վրաստանը, Ուկրաինան, Բելառուսը և այլն: Այսինքն՝ ոչ միայն պետք է շեշտը դնել գյուղմթերքի արտահանման ծավալների ավելացման, այլև աշխարհագրության ընդլայնման և թիրախային երկրների (ԵՄ, Միջին Արևելք, Հյուսիսային Ամերիկայի երկրներ, Ճապոնիա, Սինգապուր, Վիետնամ և այլն) դիվերսիֆիկացման վրա:

4) Թույլ զարգացած ենթակառուցվածքները.

Գյուղատնտեսական ենթակառուցվածքների թույլ զարգացվածությունը մեկ այլ լուրջ խոչընդոտ է ոլորտի կայուն զարգացումն ապահովելու համար: Որպես հիմնական խնդիրներ կարող են դիտարկվել ոռոգման ցանցի թույլ զարգացվածությունը, հակակարկտային համակարգերի/կայանների սակավությունը և դրանց օգտագործման ցածր արդյունավետությունը, գյուղատնտեսական արտադրանքի հավաքման կայանների բացակայությունը, գյուղամիջյան ճանապարհների ոչ բարվոք վիճակը, ջրային պաշարների պահեստավորման խնդիրները, ինչպես նաև բաշխման համակարգերի թույլ զարգացվածությունը, հնարավոր այլընտրանքային էներգիայի աղբյուրների կիրառության ցածր մակարդակը, արդիական տրանսպորտային ցանցի բացակայությունը, տեխնիկական սպասարկման, մասնագիտական, խորհրդատվական ծառայությունների, սպանդանոցային մորթի ծառայությունների անկատարությունը և այլն:

Ոռոգման համակարգերի անմխիթար վիճակը, ինչպես նաև ոռոգման ցանցերի թույլ զարգացվածությունն էական խոչընդոտ են հատկապես

բուսաբուծության զարգացման համար: Ոռոգման անհնարինության պատճառով շատ հաճախ գյուղատնտեսական հողերը նպատակային նշանակությամբ չեն օգտագործվում և հաճախ վերածվում են արոտավայրերի:

Հակակարկտային համակարգերի սակավության և ոչ արդյունավետ գործունեության պատճառով գրեթե յուրաքանչյուր տարի մեծ թվով գյուղացիական տնտեսություններ հսկայական կորուստներ են ունենում: Մասնավորապես՝ վերջին 6 տարիների ընթացքում բնական աղետների հետևանքով գյուղատնտեսությանը հասցված վնասները կազմել են ավելի քան 110 մլրդ ՀՀ դրամ, որի 80 տոկոսից ավելին՝ կարկտահարության պատճառով:

Գյուղամիջյան ճանապարհների վատ վիճակը խոչընդոտում է ինչպես արտադրանքի իրացմանը, այնպես էլ գյուղատնտեսական տեխնիկայի արդյունավետ օգտագործմանը և հողերի հասանելիությանը: Արդյունքում մեծ թվով գյուղացիական տնտեսավարողներ, հատկապես բարձրադիր և սահմանամերձ գոտիներում, չեն կարողանում օգտվել տարածաշրջանում առկա գյուղատնտեսական տեխնիկայից:

5) Գյուղատնտեսական գործունեության ավանդական մեթոդների և տեխնոլոգիաների լայնածավալ կիրառությունը. Երկրում առկա ռեսուրսների սակավության, գյուղատնտեսության արտադրողականության ցածր մակարդակի, գյուղմթերքների համեմատաբար բարձր ինքնարժեքի և նմանատիպ համակարգային խնդիրների լուծման կարևորագույն ուղղություններից մեկը նորարարական տեխնոլոգիաների զանգվածային կիրառությունն է:

Հայաստանում նորարարական տեխնոլոգիաների ներդրումը դեռևս սաղմնային փուլում է: Ժամանակակից տեխնոլոգիաները և նորարարական լուծումները հիմնականում հատվածաբար են կիրառվում: Դրանց առավել արդյունավետ և լայնամասշտաբ կազմակերպման էական խոչընդոտներն են անհրաժեշտ ֆինանսավորման միջոցների

բացակայությունը, գյուղացիական տնտեսավարողների գիտելիքների ցածր մակարդակը, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը, ինչպես նաև նորարարական տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման փորձի պակասը և գոյություն ունեցող լավագույն փորձի օրինակների տարածման ու հանրայնացման ցածր մակարդակը:

6) Տեխնիկական միջոցներով ապահովվածության և հագեցվածության ցածր մակարդակը

Գյուղատնտեսության զարգացման հիմնական նախապայմաններից է գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացումը: Վերջինս այս ոլորտի մրցունակության և արդյունավետության բարձրացման, գյուղմթերքի արտադրության ծավալների աճի և ճյուղի արտադրական ներուժի լիարժեք օգտագործման հիմնական նախապայմաններից է: Ներկայումս առկա գյուղատնտեսական տեխնիկական և մեքենաները բնութագրվում են ցածր արդյունավետությամբ, ծախսատարությամբ, բարձր մաշվածությամբ, սարքինության ցածր մակարդակով և վերանորոգման համար անհրաժեշտ հավելյալ ծախսերով:

Հայաստանում առկա գյուղատնտեսական տեխնիկայի վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեխնիկական միջոցների միջին սարքինության մակարդակը կազմում է շուրջ 82,0 %¹⁰: Ընդ որում՝ տեխնիկայի շուրջ 90-93 %-ը 1976-1991 թթ. ԽՍՀՄ արտադրության են՝ բարոյապես և ֆիզիկապես մաշված: Չնայած վերջին տարիներին որոշակի աշխատանքներ են իրականացվել գյուղտեխնիկայի թարմացման ուղղությամբ, սակայն դրանք դեռևս բավարար չեն: 1997-2010 թթ. դրամաշնորհների և այլ միջոցների հաշվին Ճապոնիայից, Չինաստանից, Հնդկաստանից ներկրվել են 885 միավոր տարբեր մակնիշի տրակտոր և 116 միավոր հացահատիկահավաք կոմբայն (ընդամենը՝ շուրջ 1000 միավոր): 2013-2015 թթ. ՀՀ գյուղատնտեսության նախարարության

¹⁰ <https://www.armstat.am/am/?nid=82&id=2009>

նախաձեռնությամբ Բելառուսի Հանրապետության գյուղատնտեսական մեքենաներ արտադրող ընկերությունների հետ բանակցությունների արդյունքում Հայաստան է ներկրվել և ուղղակի վաճառքի ու ֆինանսական վարձակալության միջոցով շուկայականից անհամեմատ ցածր գներով տնտեսավարող սուբյեկտներին և անհատներին է տրամադրվել 434 միավոր գյուղատնտեսական տեխնիկա: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում (սկսած 2011 թ.) գյուղատնտեսական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 1330 միավոր գյուղտեխնիկա:

Ժամանակակից, բարձր արտադրողականությամբ գյուղատնտեսական տեխնիկայի ներդրմամբ և կիրառությամբ, ինչպես նաև դրանց շահագործման համապատասխան գիտելիքների փոխանցմամբ հնարավոր կլինի ապահովել ոլորտի բարձր արդյունավետություն, շարունակական զարգացում և աճ:

7) Մասնագիտական պատրաստվածության խնդիրները.

Գյուղատնտեսական ոլորտի զարգացման ու նորագույն տեխնոլոգիաների ներդրման համար կարևոր է ոլորտն ապահովել ագրարային գիտելիքներով զինված մասնագետներով: Ներկայումս Հայաստանում առկա է ագրարային կրթության ցածր և անբավարար մակարդակ, հաճախ նույնիսկ ագրարային գիտելիքների և մասնագիտական հմտությունների իսպառ բացակայություն, որն ուղղակիորեն նպաստում է ոլորտում ոչ արդյունավետ և ոչ ժամանակակից գործելակերպի իրականացմանը: Ոլորտի ռազմավարական զարգացումն ապահովելու նպատակով, նախ և առաջ, անհրաժեշտ է այն ապահովել ագրարային կրթություն ստացած բարձրորակ մասնագետներով:

Լուրջ մարտահրավեր է նաև պետական մարմիններում գյուղատնտեսության ոլորտի պատասխանատու կադրերի պակասը կամ

որակավորման ցածր մակարդակը, որի պատճառներից մեկը ցածր վարձատրությունն է:

Երկարատև ժամանակահատվածում գյուղատնտեսության մեջ կայուն և ներառական աճ ապահովելու կարևորագույն գրավականներից է ոլորտի քաղաքականություն մշակող ու իրականացնող պետական մարմինների կարողությունների զարգացումը և աշխատակիցների որակավորման մակարդակի բարձրացումը:

Այս համատեքստում կարևոր է նաև մայրաքաղաքում կրթություն ստացող և գյուղեր չվերադարձող երիտասարդ մասնագետների հարցը, քանի որ գյուղերում կյանքի որակը ցածր է, ուստի երիտասարդ մասնագետները գերադասում են մնալ Երևանում և հարակից շրջաններում՝ լավագույն դեպքում իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնելու կամ ոչ մասնագիտական գործունեությամբ զբաղվելու:

Կարելի է նաև փաստել, որ գյուղատնտեսության ոլորտում ներգրավված տնտեսությունները դեռևս ամբողջությամբ չեն հարմարեցվել շուկայական տնտեսության պայմաններին, մասնավորապես՝ ցածր են գնահատվում շուկայավարման գիտելիքներն ու կարողությունները: Պետական և միջազգային բազմաթիվ ծրագրերի շրջանակներում իրականացվել են կարողությունների զարգացման տարբեր միջոցառումներ, այնուամենայնիվ, այս հարցում դեռևս առկա են որոշակի բացթողումներ, որոնք ժամանակ առ ժամանակ հնարավոր է լինում մեղմել գործող խոշոր գյուղացիական տնտեսություններում և գյուղատնտեսական կոոպերատիվներում կուտակված նմանատիպ փորձի ու գիտելիքների միջոցով:

8) Միջազգային կազմակերպությունների աջակցության և աշխատանքների համակարգման ոչ արդյունավետ կառուցակարգեր.

Դիտարկելով գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական կարևորությունը տնտեսության զարգացման գործում՝ ՀՀ կառավարությունը մշտապես իրականացնում է ոլորտի զարգացման

ուղղված ծրագրեր, որոնք գործի են դրվում ինչպես սեփական ներդրումների (ներառյալ պետական սուբսիդիաները), այնպես էլ միջազգային աջակցության շնորհիվ: Գյուղատնտեսության ոլորտում զարգացման մի շարք ծրագրեր աջակցություն են ստանում այնպիսի միջազգային կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ԵՄ-ն, ԱՄՆ ՄԶԳ-ն, ԱԶԳ-ը և այլն: 2010 թվականից ի վեր միջազգային կազմակերպությունների աջակցությամբ Հայաստանում իրականացվել են ավելի քան 200 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ գյուղատնտեսական ծրագրեր, որոնք վերահսկվել և իրականացվել են ինչպես միջազգային տարբեր կազմակերպությունների, այնպես էլ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից: Հարկ է նշել նաև, որ մի շարք ծրագրերի արդյունավետությունը դեռևս ցածր է. դրա հիմնական պատճառներն են համապատասխան պետական գերատեսչությունների համակարգային բացթողումները և դրանց միջև փոխգործակցության հստակ կառուցակարգերի բացակայությունը:

9) Պարենային անվտանգության ապահովումը.

Գյուղատնտեսության դերը խիստ կարևորվում է երկրի պարենային ապահովվածության և անվտանգության տեսանկյունից՝ հատկապես սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիության ապահովման և ինքնաբավության մակարդակի բարձրացման առումով: Հայաստանում պարենային անվտանգության ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված է դիվերսիֆիկացված սննդամթերքի արտադրության ծավալների, մատչելիության, հասանելիության և օգտագործման սահմանափակությամբ: Հայաստանում ինքնաբավության բարձր մակարդակ է ապահովվում կարտոֆիլի, բանջարաբուստանային մշակաբույսերի, պտղի, խաղողի, մանր եղջերավոր կենդանիների մսի, ձվի ուղղությամբ, միջին մակարդակից բարձր ինքնաբավության մակարդակ՝ խոշոր եղջերավոր կենդանիների մսի, կաթի ու կաթնամթերքի

ուղղությամբ, իսկ ցորենի, թռչնի և խոզի մսի, հատիկալնդեղեն մշակաբույսերի ինքնաբավության մակարդակը դեռևս ցածր է: Ինչպես արդեն նշվեց, 2017 թ. դրությամբ Հայաստանում ցածր ինքնաբավության մակարդակ ունեցող գյուղատնտեսական արտադրատեսակների թվին են պատկանում մասնավորապես ցորենը (ինքնաբավության աստիճանը՝ 33,2 %), խոզի միսը (ինքնաբավության աստիճանը՝ 58 %) և թռչնի միսը (ինքնաբավության աստիճանը՝ 22,5 %):

Այսինքն՝ նշված գյուղատնտեսական ապրանքների ներմուծման փոխարինման անհրաժեշտությունը և հրատապությունը ռազմավարական քննարկումների առարկա են, իսկ այդ ապրանքների ներքին շուկայի վրա հիմնված արտադրության խրախուսումն ու օժանդակումը առաջնային ռազմավարական խնդիրներից են:

10) Սննդամթերքի անվտանգության ցածր մակարդակը.
Պարենային անվտանգության առումով պարենի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը դեռևս բավարար պայման չէ: Պարենային անվտանգության կարևորագույն բաղադրիչ է հատկապես առողջության համար սննդամթերքի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական անվտանգությունը: Ներմուծվող, ինչպես նաև թարմ և վերամշակված սնունդ արտադրող տնտեսավարող սուբյեկտների բազմազանության, վերջիններիս կողմից տարբեր տեխնոլոգիաների կիրառման պայմաններում անհրաժեշտ է լրամշակել ՀՀ սննդամթերքի անվտանգության վերահսկման իրավական դաշտը, գտնել այժմեական և միջազգային չափորոշիչներին համապատասխան լուծումներ: Այս համակարգը դեռևս լիարժեք չի երաշխավորում սպառողների՝ անվտանգ և որակյալ սննդամթերքով ապահովումը, ինչպես նաև տեղական արտադրության սննդամթերքի մրցունակության բարձրացումն արտաքին ու ներքին շուկաներում:

Սննդամթերքի անվտանգության միջազգային ստանդարտներին համապատասխանեցումը կբարձրացնի նաև գյուղատնտեսության

մրցունակությունը արտահանման շուկաներում: Վերջինիս ապահովման համար գյուղատնտեսական և ագրոպարենային հատվածը պետք է արձագանքի տեղական սպառողների՝ սննդամթերքի անվտանգությանն առնչվող պահանջներին և մրցակցի ներկրվող, իսկ արտահանման դեպքում՝ արտասահմանյան (օրինակ՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների) ապրանքների որակական ստանդարտների հետ:

Այս առումով կարևորվում են անասնապահական տնտեսությունների կողմից արտադրանքի անվտանգության ապահովման և տվյալ արժեշղթայի վերջնական կետի՝ վերամշակման (կաթնամթերքի և մսամթերքի արտադրություն) անվտանգության ապահովման խնդիրները: Օրինակ՝ ներկայումս Հայաստանում սննդի անվտանգության տեսանկյունից լուրջ սպառնալիք է կաթի և կաթնամթերքի միջոցով կենդանիներից մարդուն փոխանցվող բրուցելյոզ հիվանդությունը:

11) Հարկային կարգավորումներով պայմանավորված խնդիրներ. Չնայած այն փաստին, որ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող հարկային քաղաքականությունը գնահատվում է որպես արտոնյալ (շնորհիվ՝ գյուղատնտեսական արտադրողներին շահութահարկից և եկամտային հարկից ազատման, ավելացված արժեքի հարկ (այսուհետ՝ ԱԱՀ) վճարող համարվելու հետ կապված արտոնյալ կարգավորումների, ոլորտի հետ կապված՝ տարբեր ապրանքների ներմուծումն ու հետագա իրացումը ԱԱՀ-ից ազատելու, գույքային հարկերի մասով արտոնյալ կարգավորումների և այլն), հարկային օրենսդրությունը շարունակում է պարունակել որոշակի կարգավորումներ, որոնք սահմանափակում են գյուղատնտեսության զարգացման ռազմավարական նպատակներին հասնելու հնարավորությունները: Այդպիսի սահմանափակումների ազդեցությունը նվազեցնելու համար անհրաժեշտ է քննարկել և վերանայել այն հարկային կարգավորումները, որոնք սահմանափակում են գյուղատնտեսական գործունեության

արդյունքների ազդեցացման և առևտրայնացման հնարավորությունները, դանդաղեցում են գյուղատնտեսական արտադրության ապրանքայնացման գործընթացը, սահմանափակում են գյուղացիական տնտեսություններում՝ բարձր ավելացված արժեք ստեղծելու վարքագծի զարգացումը:

Ձգտելով նվազագույնի հասցնել ոլորտի զարգացման առկա արգելքները և սահմանափակումները, սույն ռազմավարության նպատակներին հասնելու նպատակով՝ քննարկման կներկայացվեն այնպիսի հարկային կարգավորումներ, որոնք կառաջարկեն Հայաստանում գյուղատնտեսության մրցունակության բարձրացման համար արդյունավետ լուծումներ, այդ թվում՝

ա. ազրոպարենային ապրանքների համար գործարքների փաստաթղթավորման և ԱԱՀ-ի գծով հաշվանցումների կատարման հատուկ համակարգի ներդրում,

բ. առաջնային գյուղատնտեսական արտադրանք արտադրողների համար առկա հարկային կարգավորումների բարելավում,

գ. գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և արտահանման խթանների սահմանման,

դ. գույքային հարկերին առնչվող կարգավորումների բարելավման և այլ եղանակներով:

12) Գյուղատնտեսության ոլորտում ժամանակակից տեղեկատվական համակարգերի զարգացման խնդիրները.

Գյուղատնտեսության ոլորտում ժամանակակից տեղեկատվական և ավտոմատացված կառավարման համակարգերի թույլ զարգացվածությունը բացասաբար է ազդում ոլորտի առավել ճշգրիտ քաղաքականության մշակման և արդյունավետ իրականացման

գործընթացների վրա: Վերհանված նմանօրինակ խնդիրներից կարևոր նշանակություն ունեն՝

ա. գյուղացիական տնտեսությունների թվային ռեգիստրի մշակումն ու գործարկումը,

բ. գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման թվայնացված համակարգերի մշակումն ու ներդրումը,

գ. գյուղատնտեսական նշանակության հողերի թվայնացված քարտեզների և ագրոքիմիական հետազոտությունների հիման վրա տեղեկատվական բազաների ստեղծումն ու կիրառումը,

դ. գյուղատնտեսության ոլորտի տեխնիկատնտեսական ցուցանիշների և նորմատիվների կենտրոնացված տվյալների բազայի մշակումը և կիրառումը:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների միջև կնքված համաձայնագրերի շրջանակներում գյուղատնտեսության ոլորտի վիճակագրական համակարգերի ներդաշնակեցման խնդիրը ներառված է տարածաշրջանային համագործակցության այդ կարևորագույն նախաձեռնությունների հիմքում: Այդ համագործակցությունը պետք է ապահովի ԵՄ ու ԵԱՏՄ վիճակագրական փորձառության սկզբունքների կիրառումը, մասնավորապես՝ այլ ոլորտների հետ համատեղ գյուղատնտեսության վիճակագրական հաշվառման գործընթացը: Այս առումով կարևորվում են գյուղատնտեսության ոլորտի վիճակագրական համակարգերի որակի ապահովումն ու կառավարումը, վիճակագրական դասակարգումները, հավաքագրված տվյալների արժանահավատությունը, ինչպես նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ գյուղացիական տնտեսությունների թվային ռեգիստրի ձևավորումը հնարավորություն է տալիս տեղեկատվություն ստանալ պետական աջակցության շահառու բոլոր տնտեսությունների վերաբերյալ. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվելիք գյուղացիական տնտեսությունների թվային ռեգիստրի կամ գրանցման համակարգի ստեղծման արդյունքում կձևավորվի միասնական համակարգ, որտեղ կգետեղվի և պարբերաբար կթարմացվի գյուղացիական տնտեսությունների ընդհանուր տնտեսական գործունեության վերաբերյալ մանրամասն և հավաստի տեղեկատվություն, ինչպես նաև հնարավորություն կստեղծվի գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման թվայնացված համակարգի ներդրման համար:

Հայաստանում մինչ այժմ կենդանիների համատարած համարակալում և գրանցում տեղի չի ունեցել, ինչի արդյունքում դժվարություններ են առաջանում անասնաբուծության բնագավառում կենդանիների գլխաքանակի և սեռատարիքային կազմի վերաբերյալ հստակ տեղեկատվություն ստանալու հարցում: Այս համակարգի ներդրումը կնպաստի Հայաստանում գյուղատնտեսական կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման գործընթացների արդյունավետության բարձրացմանը, հնարավորություն կստեղծի անասնաբուծական արտադրանքի ծավալների կանխատեսման համար, ինչի արդյունքում կբարձրանա վաճառվող մսի ու մսամթերքի նկատմամբ սպառողների վստահությունը, պետական պատվերի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների լիարժեք իրականացման մակարդակը, հիվանդությունների կանխարգելումը և արդյունավետ անասնաբուժական վերահսկումը: Այս համակարգի ներդրման արդյունքում հնարավոր կլինի առավել արդյունավետ կազմակերպել անասնաբուժական մթերքի որակի փորձաքննությունը և երկրի ներսում կենդանիների տեղաշարժի վերահսկումը, ինչպես նաև արտաքին շուկաներ

մուտք գործելու համար միջազգային չափորոշիչներով սահմանված պահանջների ապահովումը:

Խիստ հրատապ խնդիր է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի և ագրոքիմիական լայնածավալ հետազոտությունների հիման վրա հողերի որակական հատկանիշների թվայնացված քարտեզների կազմումը: Մեփականաշնորհումից հետո հողերը մշակվել են առանց ագրոքիմիական կանոնների պահպանման՝ միակողմանի պարարտացման և գիտականորեն հիմնավորված ցանքաշրջանառության բացակայության պայմաններում, ինչի հետևանքով նվազել են հողերի որակական հատկանիշներն ու բերրիությունը, մշակաբույսերի բերքատվությունն ու դիմացկունությունը, բերքի որակը: Նվազել են նաև ոլորտի եկամտաբերությունը և ներդրումային գրավչությունը:

Այս խնդիրը խիստ փոխկապակցված է գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվառման, խոշորացման և երկրորդային շուկայի զարգացման հետ. թվայնացված ագրոքիմիական քարտեզները հնարավորություն կտան ստանալ հետազոտված հողերի՝ սննդատարրերով ապահովվածության տվյալները: Դրանց հիման վրա հնարավոր կլինի կազմել մշակաբույսերի պարարտացման՝ գիտականորեն հիմնավորված երաշխավորագրեր և ուղեցույցներ, որոնք կկիրառվեն հողօգտագործողների կողմից՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելիս: Թվայնացված համակարգերի և քարտեզների կիրառության արդյունքում նաև կբարձրանան հողերի բերրիությունը, մշակաբույսերի բերքատվությունը, բերքի որակը, բույսերի դիմացկունությունը, ինչպես նաև կկայունանա ոլորտի եկամտաբերությունը:

Այս համատեքստում մյուս կարևոր խնդիրը գյուղատնտեսության ոլորտի տեխնիկատնտեսական ցուցանիշների և կենտրոնացված նորմատիվային տվյալների բազայի բացակայությունն է: Վերջինիս անհրաժեշտությունը նույնպես պայմանավորված է ոլորտի պետական

քաղաքականություն մշակող մարմինների գործունեության և որոշումների կայացման գործընթացում օպերատիվ, համակարգված և արժանահավատ տեղեկատվության ու տվյալների կարևորությամբ: Նմանօրինակ բազայի առկայությունը հնարավորություն կտա առավել ճշգրիտ, օպերատիվ և հասցեական դարձնել ոլորտին վերաբերող քաղաքականության մշակումն ու իրականացումը, ինչպես նաև առօրյա գործունեության ընթացքում պետական համապատասխան մարմինների աշխատանքի կազմակերպումը: Այն նաև օգտակար կլինի գյուղատնտեսության ոլորտի մյուս մասնակիցներին՝ իրենց գործունեության պլանավորման ընթացքում առավել վստահելի տեղեկատվություն ստանալու տեսանկյունից:

13) Գյուղերի զարգացվածության ցածր մակարդակը.

Հայաստանի Հանրապետության գյուղերի մեծ մասը դեռևս գտնվում են զարգացման ցածր մակարդակի վրա: Դիտարկելով այն փաստը, որ Հայաստանում գյուղատնտեսական գործունեությունը հիմնականում իրականացվում է գյուղական բնակավայրերում՝ գյուղացիական տնտեսությունների կողմից, գյուղերի զարգացվածության մակարդակն անմիջականորեն ազդում է ոլորտի արդյունավետ գործունեության վրա: Ներկայումս գյուղերում առկա է ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ իրավագիտակցության, ֆինանսական և գյուղատնտեսական գիտելիքների ու հմտությունների ցածր մակարդակ, որը հանգեցնում է և՛ գյուղատնտեսությամբ զբաղվողների, և՛ շուկայի այլ դերակատարների միջև անարդյունավետ համագործակցության:

Գյուղերում զարգացվածության ցածր մակարդակն ուղեկցվում է բնակչության ծերացմամբ, որը հիմնականում պայմանավորված է ինչպես երիտասարդների՝ գյուղերից դեպի քաղաք հոսքով, այնպես էլ երկրից արտագաղթով: Այս երևույթը հանգեցնում է ոլորտի արդյունավետության անկման, քանի որ ոլորտում առաջանում է մասնագիտական հմտությունների, առավել ինտենսիվ և նորարարական տեխնոլոգիաների ինտեգրման, արտաքին նոր շուկաների գրավման, բանակցային

հմտությունների պակաս: Գյուղական բնակչության կենսամակարդակի բարելավման և աղքատության մակարդակի կրճատման առումով կարևոր նշանակություն ունի գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացումը և գյուղական բնակչության ներգրավումը ոչ գյուղատնտեսական գործունեության ոլորտում:

Շուկայական հարաբերությունների պայմաններում այս բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ու դրանց կառավարման գործում գերակշիռ դերակատարության հետ մեկտեղ էական նշանակություն ունի պետության կողմից աջակցությունը կրթամշակութային և մարզական օբյեկտների գործունեության, ագրոտուրիզմի զարգացման ծրագրերի մշակման, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման, ինչպես նաև գյուղաբնակ կանանց ու երիտասարդների գործարար ակտիվության բարձրացման նպատակային և այլ ծրագրերի իրականացման հարցերում:

14) Բնական աղետները և կլիմայական ռիսկերը.

Հայաստանում գյուղատնտեսությունը մշտապես աչքի է ընկել բնակլիմայական ռիսկերի բարձր մակարդակով (կարկտահարություն, ցրտահարություն, երաշտ և այլն): Ինչպես արդեն նշվեց, վերջին 6 տարիներին բնական աղետների հետևանքով գյուղատնտեսությանը հասցված վնասները կազմել են ավելի քան 110 մլրդ ՀՀ դրամ: Այստեղ բնակլիմայական ռիսկերը լուրջ խնդիր են, քանի որ դեռևս զարգացած չեն պետական, քաղաքական կամ ինստիտուցիոնալ հստակ ձևավորված այնպիսի կառուցակարգեր, որոնց կիրառման դեպքում հնարավոր է որոշակիորեն մեղմել առկա ռիսկերը: Այդ կառուցակարգերի բացակայության պատճառով ձևավորված չէ նաև գյուղատնտեսական վնասի ամբողջական գնահատման կառուցակարգը: Ռիսկերը ևս նախապես չեն գնահատվում: Այս առումով գյուղատնտեսական ռիսկերի նվազեցման, վնասների համակարգված փոխհատուցման

կառուցակարգերի ներդրման, տնտեսավարող սուբյեկտների եկամուտների մակարդակի կայունության ապահովման նպատակով հարկ է անդրադառնալ նաև գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության կարևորագույն հարցին և փաստել, որ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրումը ոլորտի առաջնային ռազմավարական խնդիրներից է:

Բնակլիմայական պայմանների փոփոխությունները կարող են վտանգել գյուղատնտեսական արտադրանքի բնականոն արտադրական գործընթացը, որն իր հերթին կարող է խոչընդոտել ոլորտի զարգացմանը, ինչպես նաև դառնալ սոցիալական լուրջ խնդիրների պատճառ, քանի որ գյուղական բնակչության կենսաապահովումը հիմնականում կախված է գյուղատնտեսական գործունեությունից:

Գյուղատնտեսության ոլորտում ներդրումներ իրականացնելիս պետք է հաշվի առնել նաև կլիմայի փոփոխությունները և խթանել կանաչ տեխնոլոգիաները, որոնք կնվազեցնեն կլիմայի փոփոխության անբարենպաստ ազդեցությունը, կօպտիմալացնեն բնական ռեսուրսների օգտագործումը, կնվազեցնեն գյուղատնտեսական ապրանքների արտադրական թափոնները և կբարձրացնեն կլիմայի փոփոխության արդյունքում առաջացող բացասական երևույթների նկատմամբ դիմացկունությունը:

Ուստի գյուղատնտեսական ռիսկերի նվազեցման, համակարգված կերպով վնասների փոխհատուցման մեխանիզմների ներդրման, տնտեսավարող սուբյեկտների եկամուտների մակարդակի կայունության ապահովման նպատակով հարկ է անդրադառնալ նաև գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության կարևորագույն հարցին: ՀՀ գյուղատնտեսության ոլորտն ապահովագրական ընկերությունների համար մինչև այժմ գրավիչ չի եղել, ինչը պայմանավորված է Հայաստանի տարածքային առանձնահատկություններով և բնակլիմայական պայմաններով.

գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպվում է ընդարձակ տարածքների վրա ու բազմաբնույթ ուղղություններով, ինչը լրացուցիչ ծախսեր և ջանքեր է պահանջում ապահովագրական հիմնավորված սակագների սահմանման և ապահովագրական օբյեկտների կառավարման համար:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ գյուղատնտեսության ոլորտում առաջնային ռազմավարական մյուս խնդիրը ապահովագրական համակարգի աստիճանական ներդրումն է:

15) Գյուղատնտեսության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման անհրաժեշտությունը. ՀՀ գյուղատնտեսության ոլորտում անհրաժեշտ է օրենսդրական դաշտի կատարելագործում, մասնավորապես՝ գյուղատնտեսության մասին օրենքի և մի շարք նոր իրավական ակտերի մշակում և ընդունում, ինչպես նաև գործող իրավական ակտերում լրացումների և փոփոխությունների իրականացում, որոնց մշակումը նախատեսվում է Ռ-ազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում:

2. ՏԵՍԼԱԿԱՆ

25. Առաջիկա տասը տարիների տեսլականն է ունենալ կայուն զարգացող, նորարարական, բարձր ավելացված արժեք ստեղծող, բնական պաշարների նկատմամբ հոգատար և շրջակա միջավայրի հետ ներդաշնակ, էկոլոգիապես մաքուր արտադրանք ստեղծող և գյուղում բնակվող մարդու բարեկեցությունը երաշխավորող գյուղատնտեսություն:

3. ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

26. Բարձրացնել գյուղատնտեսական ոլորտի մրցունակությունն ու արդյունավետությունը. Հայաստանի գյուղատնտեսության ռազմավարության հիմնական հրամայականն է բարձրացնել գյուղատնտեսության մրցունակությունը:

Մրցունակությունը սահմանվում է որպես ցանկացած անհատի, ընկերության, ոլորտի, շրջանի կամ երկրի առավելություն՝ ապրանքներ և ծառայություններ վաճառելիս: Երկրի, ենթաոլորտի կամ գյուղատնտեսական արտադրանքի մրցունակությունը պայմանավորված է ոլորտի բազմաթիվ գործոններով, որոնցից են բիզնես միջավայրը, ոլորտում աշխատուժի առկայությունը և որակը, բնական ռեսուրսները (հատկապես հողի և ջրի որակն ու ջրի առկայությունը), գյուղատնտեսության ոլորտի քաղաքականությունը և կանխատեսելիությունը, բյուջեների համապատասխանությունը, գյուղատնտեսական ծրագրերի իրականացման որակը, շուկայի զարգացման մակարդակը (որքանով է շուկան բաց, հասանելի բոլոր արտադրողների համար), ճյուղային ռիսկերը և դրանց մեղմման ռազմավարությունը, աջակցող առանցքային հաստատությունների զարգացվածությունը և ֆինանսական միջոցների հասանելիությունը՝ գյուղատնտեսությամբ զբաղվողների համար:

Մրցունակության բարձրացումը պահանջում է համապարփակ ջանք և միաժամանակյա աշխատանք՝ տարբեր բնագավառներում:

1) Հողային բարեփոխում. Հողի շուկայի զարգացումը և չօգտագործվող ու լքված հողերի դեմ իրականացվող միջոցառումները չափազանց մեծ նշանակություն ունեն երկրի գյուղատնտեսության հետագա զարգացման համար: Այս տեսանկյունից չօգտագործվող հողը հնարավորություն է, ոչ թե խոչընդոտ: Ուստի Կառավարությունն

անհապաղ առաջնահերթություն է տալու հողի շուկայի զարգացման ներառական ծրագրին, որի հիմնական նպատակներն են՝

ա. քաղաքականությունը (հատկապես քաղաքականության աջակցության միջոցառումները) ուղղորդել լքված հողերի հիմնախնդրի լուծմանը,

բ. ստեղծել հողի առևտրի մեխանիզմներ՝ շրջահայաց և փորձարկված սկզբունքների հիման վրա (օրինակ՝ վարձակալության դեպքում հողի սեփականատերը չի փոխվում, այլ հավաքագրված բոլոր վարձակալական վճարները տրամադրվում են հողի սեփականատիրոջը),

գ. հողային բանկերը և աճուրդները զարգացնելու միջոցով լքված հողերի մարկետինգը և չօգտագործված կամ թերօգտագործվող պետական հողերի վաճառքը խթանելու նպատակով հողի վարձակալական իրավունքը տրամադրել ամենաբարձր գին առաջարկողին՝ հատուկ նախապատվություն տալով հարևաններին և երիտասարդ տնտեսավարողներին,

դ. իրականացնել հողերի կոնսոլիդացման երկարաժամկետ ծրագիր՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի, տեղական նախաձեռնությունների և հողամասերի փոխանակման վրա:

Այդ նպատակներին հասնելու համար Նախարարությունը գերակա առաջնահերթություն կդարձնի գյուղատնտեսական հողատարածքների հաշվառման թվայնացումը և բարելավված հողերի հաշվառումն ու հետազոտումը: Այս ամենը կուղեկցվի հողային օրենսդրության բարելավված փաթեթով և հողերի սեփականատերերի ու հողօգտագործողների միջև նոր կապերի խթանմամբ, ինչը կիրականացվի Նախարարության կողմից նոր մեխանիզմներին (հողային բանկերին և հողերի թվային առևտրի ու աճուրդի հարթակներին) տրամադրվող աջակցությամբ:

2) **Ոռոգում.** Մրցունակության մյուս առաջնահերթությունը կլինի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ միասին ոռոգման նոր համակարգերի զարգացմանն աջակցումը և

գոյություն ունեցող ոռոգման ենթակառուցվածքների վերականգնումը, ոռոգման ծառայությունների տրամադրման գործում ներգրավված հանրային հաստատությունների որակի և արդյունավետության, ինչպես նաև ոռոգված հողերի ջրօգտագործման դիմաց վճարման համակարգերի բարելավումը: Այդ ընթացքում Նախարարությունը կխթանի ջրային ռեսուրսների թվայնացված քարտեզագրումը (որը կհիմնվի երկրում ջրօգտագործման մոնիտորինգի նախկին ծրագրերի վրա), հաճախորդների տվյալների բազայի մշակումը, չօգտագործված հողերի ոռոգման պլանավորումը, ոռոգման համակարգում պետական-մասնավոր գործընկերության ամրապնդումը: Այս բոլոր միջոցառումները պետք է ներառեն հետևյալ սկզբունքները՝ զգոնություն շրջակա միջավայրի վրա երկարաժամկետ ազդեցությունների նկատմամբ, տնտեսական իրագործելիության և ծախսերի վերականգնման մեծացման ներուժի գնահատում, ինչպես նաև պետական և մասնավոր հաստատությունների միջև գործընկերության հատուկ շեշտադրում:

3) Բարելավել վարկային շուկայի զարգացումը.

Գյուղատնտեսությամբ զբաղվողների համար բարելավված ֆինանսական ծառայությունների հասանելիությունը ոլորտի մրցունակության հիմնական շարժիչ ուժերից մեկն է:

Հայաստանում գյուղատնտեսական վարկերի շուկան բնութագրվում է վարկ օգտագործողների մեծ թվով և հաճախորդների վարկերի՝ պատշաճորեն մշակված պատմություններով: Միևնույն ժամանակ ընդհանուր վարկային պորտֆելում երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռը ցածր է, իսկ տոկոսադրույքները՝ բարձր, ինչն ապախթանում է փոքր գյուղացիական տնտեսությունների կողմից փոխառությունը բարձր ռիսկային կամ երկարաժամկետ գյուղատնտեսական ներդրումային գործունեության նպատակով: Ըստ էության՝ գյուղատնտեսական շատ վարկեր այսօր սպառողական վերաձևակերպվող վարկեր են, այսինքն՝ վարկային գումարի միայն մի

մասն է օգտագործվում որպես կարճաժամկետ շրջանառու կապիտալ գյուղատնտեսական գործունեության և ներդրման համար:

Գյուղատնտեսական վարկային շուկայում այս մարտահրավերների լուծման նպատակով, ֆինանսական հաստատությունների և Կենտրոնական բանկի հետ համատեղ, Նախարարությունը կապահովի վարկային շուկայում բավարար մրցակցություն՝ միաժամանակ իրականացնելով վարկերի խթանման բազմաթիվ ծրագրեր: Նախարարության գործողությունները կսկսվեն առաջնային արժեշտիների մասով գյուղատնտեսական վարկային շուկաների բացթողումների համակարգված վերհանմամբ և դրանց լուծման նպատակով գործողությունների ծրագրերի մշակմամբ: Օրինակ՝ ներկայումս բանկերը վարկերի վերաբերյալ որոշումները կայացնում են ըստ գրավի առկայության, սակայն, որպես նորարարություն, մրցակցային առավելություն կդիտարկվեն բիզնես պլանի առկայությունը և շուկայի զարգացման հնարավորությունները (օրինակ՝ տեխնիկական աջակցություն բանկերին, ռիսկերի երաշխավորման սխեմաներ՝ գրավով փոխառության կոշտ ստանդարտների վերացման նպատակով):

Որպես առաջնահերթ կարճաժամկետ միջոցառումներ կառաջարկվեն գործող աջակցության սխեմաներով ծրագրեր, ինչպիսիք են գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանն ուղղված ծրագրերը, թիրախային դրամաշնորհների փոխարինումն աջակցության ծրագրերով (օրինակ՝ գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների ֆինանսական լիզինգ, խոշոր եղջերավոր կենդանիների բուծման, գյուղատնտեսական վերամշակման ոլորտում ներդրումների, խաղողի և ինտենսիվ այգիների, ջերմատների, ժամանակակից ոռոգման համակարգերի զարգացման համար տրամադրվող վարկեր և այլն):

Կա նաև Հայաստանի գյուղատնտեսական երաշխիքային ֆոնդ ստեղծելու տրամաբանական հիմնավորում, որը կլինի կա՛մ որպես Պետական երաշխիքային ֆոնդի մաս, կա՛մ համատեղ նպատակ ունեցող

առանձին կառույց, որը բանկերի կողմից կօգտագործվի ծառայությունները գյուղացիներին և ավանդաբար բարձր ռիսկային ոլորտ համարվող ագրոբիզնեսին ուղղելու նպատակով: Այս տեսակետից ֆոնդը որի համար պետք է կատարվի հետագա իրագործելիության վերլուծություն, կլինի գյուղատնտեսական վարկերի տեղական, անկախ, կայուն երաշխիքային կառույց, որը պորտֆելային վարկային երաշխիքներ կտրամադրի ֆինանսական հաստատություններին՝ գյուղացիներին և ՓՄՁ-ներին հատկացվող վարկերի մասով՝ ռիսկի որոշակի տոկոսը ծածկելու նպատակով: Ֆոնդի կապիտալը կարելի է հավաքագրել տարբեր դոնորներից, իսկ իրականացումը պետք է հենվի զարգացող երկրների լավագույն փորձի վրա:

4) Ռիսկերի մեղմում, հարմարվողականություն և դիմադրողականություն կլիմայի փոփոխություններին. Ներկայումս Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության պրոդուկտները այնքան սահմանափակ են, որ կարծես գոյություն չունեն: Շուկայի կարիքների և ապահովագրական նորարարությունների վերաբերյալ փոքր գյուղացիական տնտեսությունների գիտելիքների և տեղեկատվության բացակայության հետևանքով ապահովագրական ընկերությունները կարծում են, թե շուկայի ներուժը սահմանափակ է: Հետևաբար նրանք այնքան էլ հետաքրքրված չեն գյուղատնտեսական ապահովագրական պրոդուկտների մշակմամբ, ինչը պայմանավորված է ընկալվող բարձր ռիսկով և ոլորտի ցածր շահութաբերությամբ: Պատշաճ գյուղատնտեսական ապահովագրության պրոդուկտների բացակայությունը մեծապես խոչընդոտում է գյուղացիների կողմից վարկերի, եկամտի հասանելիությանը և նույնիսկ պարենի անվտանգությանը, հատկապես երբ աճում են ավելի ու ավելի անկանխատեսելի եղանակային դրսևորումների և աղետաբեր երևույթների (օրինակ՝ կարկտահողմեր) արդյունքում առաջացող

կորուստները: Ապահովագրության խթանման ներկայիս ծրագրերը չեն ապահովում ակնկալվող արդյունքները:

Ուստի, ՀՀ կառավարությունը դոնորների և ապահովագրական ընկերությունների հետ միասին արդեն սկսել է ագրո-ապահովագրության արդիականացված համակարգի բարեփոխման ու զարգացման վերաբերյալ քննարկումները: Մոդելը կլինի հարատև, ինչի համար պահանջվում է հետագա աջակցություն Կառավարության և դոնորների կողմից. այն կստանա Կառավարության աջակցությունը, սակայն հիմնականում կունենա շուկայական կողմնորոշում և հիմնված կլինի նոր տեխնոլոգիաների վրա (օրինակ՝ ապահովագրության պրոդուկտները, որոնք գործարկվում են ապահովագրության ավտոմատացված անդերրայթինգի և բողոքների մշակման հեռավար հսկողությամբ):

Ռիսկերի մեղմման տեսանկյունից, բացի ապահովագրության շուկայի մարտահրավերներից, հրատապ խնդիր է հարմարվողականությունը և դիմադրողականության բարձրացումը կլիմայի փոփոխություններին: Այն չպետք է հիմնվի պարզապես առանձին կոնկրետ միջոցառումների վրա, այլ պետք է համակցվի Կառավարության այնպիսի ծրագրերի և գործողությունների հետ, որոնք ուղղված են կլիմայի փոփոխությունների նկատմամբ հարմարվողականության պահպանմանը և դիմադրողականության բարձրացմանը գյուղատնտեսական ոլորտի երկարաժամկետ մրցունակության բարելավմանը՝ բարձր ռիսկային խմբում գտնվող գյուղացիական տնտեսություններին և բնակչությանը պաշտպանելու նպատակով:

Նախարարությունը, համագործակցելով այլ շահագրգիռ նախարարությունների հետ, կհանձնառի մշակել կլիմայի փոփոխություններին հարմարվողականության և դիմադրողականության բարձրացման առավել համակարգային ծրագրեր, ներառյալ՝ կլիմայի փոփոխության վերաբերյալ տվյալների և ռեսուրսների պլանավորման և որոշումների կայացման գործընթացում կանխատեսումների ինտեգրում,

այդ թվում՝ առանձին մշակաբույսերի և արժեշտիթաների մասով աշխարհագրական առաջնահերթությունների սահմանում, ընդլայնման ծրագրերում կլիմայի «խելացի» գործելակերպերի ինտեգրում և կլիմայի փոփոխություններին հարմարվողականության և դիմադրողականության բարձրացման հատուկ ներդրվող միջոցների վերհանում ու խթանում (օրինակ՝ երաշտադիմացկուն սորտեր): Կան նաև կլիմային առնչվող բազմաթիվ այլ «խելացի» գործելակերպեր և հարմարվողականության տարբերակներ, որոնք կարող են խթանվել հաղորդակցության բազմաթիվ գործիքների միջոցով՝ հարմարվողականության, դիմադրողականության բարձրացման սեփական ռազմավարություն ստեղծելու և իրականացնելու հարցում գյուղատնտեսությամբ զբաղվողներին օգնելու նպատակով:

Կլիմայի փոփոխություններին հարմարվողականության, դիմադրողականության բարձրացման և ռիսկերի մեղմման առումով առաջնահերթ են կարկտահարության պատճառած վնասների կանխարգելմանն ուղղված առավել համապարփակ, արդյունավետ ծրագրերի մշակման և ընդունման հնարավորությունները: Հիմնական միջոցառումը կներառի կարկտային ամպերի հեռացման պետական համակարգի վերանայումը, զուգահեռաբար՝ ժամանակակից բարձրորակ կարկտապաշտպան ցանցային համակարգերի ձեռք բերման համար անհրաժեշտ ներդրումների և աջակցության ավելացումը:

5) Արժեշտիթաների առևտրայնացման, արդիականացման և մեքենայացման ներդրումներն իրականացվում են գյուղատնտեսական կրթության ոլորտում նոր տեխնոլոգիաների (օրինակ՝ մեքենաներ, սարքավորումներ, թվային տեխնոլոգիաներ), գյուղատնտեսության առաջնային արժեշտիթաների և գյուղացիական տնտեսությունների համար նախատեսված միջոցառումներում:

ՀՀ կառավարությունը հանձնառել է աջակցել՝

ա. թիրախային շահառուներին, այն է՝ փոքր գյուղացիական տնտեսություններին և ագրոբիզնեսի ոլորտի ձեռնարկատերերին,

հատկապես երիտասարդներին, կանանց և գյուղատնտեսության մեջ ներգրավված բարձրագույն կրթությամբ մասնագետներին,

բ. խոստումնալից ենթադրություններին/պրոդուկտներին, որոնք աչքի են ընկնում բարձր շահույթով և արժեք ավելացնելու ներուժով, աջակցում են գերադասելի դիրքավորմանը, ունեն արտահանման դիվերսիֆիկացման կամ ներմուծման փոխարինման ներուժ, իսկ վերջնական արդյունքում՝ կարևոր են գյուղական շրջանների զարգացման և աշխատատեղերի ստեղծման համար,

գ. ներդրումներին, ինչպիսիք են՝ պահեստավորման, վերամշակման, ոռոգման, ջերմատների զարգացման, նորարարական տեխնոլոգիաների (օրինակ՝ թվային գյուղատնտեսության և մեքենայացման ոլորտի նորարարություններ, ժամանակակից գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեղական արտադրություն) համար կատարվող ներդրումները,

դ. գերակա աշխարհագրական շրջաններին՝ հատուկ ուշադրություն դարձնելով անբարենպաստ տարածքներին (LFA),

ե. լավ գործելակերպին, այն է՝ արժեշղթայի ագրեգացմանը, համագործակցությանը և օրինականացմանը:

Արժեշղթաների միջոցով խոչընդոտների վերացման հիմնական մեխանիզմները կլինեն բացթողումների վերհանումը և նպատակային դրամաշնորհների սխեման դրամաշնորհային համակարգի մշակման առաջին գործողությունը և Գյուղատնտեսության ռազմավարության գործողությունների պլանավորման ու իրականացման գործընթացի հիմնական ընդհանուր բաղադրիչը կլինի ներդրումը գյուղատնտեսության արժեշղթայի արագ գնահատման և առաջնահերթությունների սահմանման ուսումնասիրությունների համար: Վերջինս հաշվի կառնվի ապրանքների տնտեսական մրցունակության, միջազգային շուկաների պահանջների և պահանջարկի միտումների, Հայաստանի մասին գնորդի ընկալման, լավագույն միջազգային գործելակերպերի հիման վրա կատարվող

արժեշտիքների բացթողումների վերլուծություններում: Նախարարությունն արդեն ունի մշակված առաջնային արժեշտիքներ, որոնք կշարունակվեն արդեն իսկ արժեշտիքների վերլուծությամբ զբաղվող մասնավոր հատվածի, դոնորների, փորձագիտական կազմակերպությունների (օրինակ՝ CARD հիմնադրամ) հետ համագործակցությամբ իրականացվող գործողությունների պլանավորման գործընթացում: Այնուհետև կդիտարկվեն ոչ միայն գյուղատնտեսական արտադրանքը և պարենամթերքը, այլև գյուղատնտեսության ոլորտի կանխատեսելի ճյուղերի արտադրանքը, ինչպիսիք են դեղաբույսերը և համեմունքները, գույները և բույրերը, օժանելիքը, կոսմետիկան և այլն:

Այս գործընթացը հնարավոր դարձնելու համար առաջիկայում Նախարարությունը նաև կմեծացնի արժեշտիքների վերլուծության սեփական կարողությունը, կավելացնի թիրախային նպատակային դրամաշնորհների թիվը, կբարելավի դրամաշնորհների շահառուների ընտրության ընթացակարգերը և զգալիորեն կընդլայնի դրամաշնորհների սխեմաների իրականացման կարողությունը:

6) Բարելավել ներդրումների արդյունավետությունը և մատչելիությունը. գյուղացիների կողմից իրականացվող աշխատանքները, ներդրվող ջանքերը և կատարվող ներդրումները կարող են անպտուղ լինել, եթե նրանք շարունակեն ցածր բերք և/կամ ցածրորակ ներուժ ունեցող վատորակ սերմեր օգտագործել, ինչպես նաև վատ տնկանյութերով խաղողի և այլ պտղատու այգիներ հիմնել: Տնկման ընթացքում կատարված սխալները հետագայում չեն կարող շտկվել, ուստի նման թերություններով նախաձեռնություններն ունեն շահութաբերության նվազագույն հնարավորություն: Ընդհանուր առմամբ Հայաստանում գյուղատնտեսական միջոցները մատչելի են գյուղացիների համար, սակայն դրանք հաճախ ցածրորակ են: Զանի որ Հայաստանը չունի սերմերի և տնկանյութերի հավաստագրման հուսալի և կայացած սխեմա, գյուղացիները հաճախ օգտագործում են իրենց սեփական սերմերը, որոնք

կրում են արտադրության անորոշ վերջնարդյունքների և հիվանդությունների նկատմամբ խոցելիության ռիսկեր: Բացի այդ՝ ժամանակակից տեխնոլոգիաներով սերմարտադրող մեծ ընկերությունները ներկայումս նկատելի հետաքրքրվածություն չեն դրսևորում հայաստանյան շուկային աջակցելու հարցում: Ուստի Նախարարության նպատակն է շտկել այդ իրավիճակը՝ ներդրումներ կատարելով սերմերի և տնկանյութերի հավաստագրման համակարգերի բարելավման գործում: Այս մոտեցումը խոստումնալից է, քանի որ այն բարդ չէ, չի պահանջում մեծ թվով աշխատողներ, մեծ շինություններ կամ հողատարածքներ, պարզապես անհրաժեշտ է միջազգային ստանդարտներին համապատասխան նոր օրենսդրություն, որը կապահովի բոլոր ամրագրված ընթացակարգերի խստորեն կատարումը և աջակցությունը վերապատրաստված անձնակազմի կողմից: Նմանատիպ միջոցառումները համեմատաբար կարճ ժամանակահատվածում պետք է որ օգնեն Հայաստանում տեղական սերմերի արտադրության խթանմանը, ինչը կհանգեցնի առավել էժան և լավ սերմնանյութի ու տնկանյութի մատչելիությանը, գյուղացիների կողմից լավ սերմերի օգտագործմանը, բերքատվության և դիմակայունության բարելավմանը և, այդպիսով՝ Հայաստանի գյուղատնտեսության մրցունակության աճին:

Իրականացվող քաղաքականության և խթանների, ինչպես նաև մասնավոր հատվածի հետ համագործակցության միջոցով Նախարարությունը կաջակցի նաև թռչնաբուծական և անասնապահական ֆերմաների ստեղծմանը: Դա կնպաստի արտադրության ակտիվացմանը և դիվերսիֆիկացմանը, որոնց նպատակն է Հայաստանի Հանրապետության բնակչության պարենային անվտանգության ապահովումը:

26.1.Առաջադրված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները՝

1) նվազեցնել չօգտագործվող հողատարածքները և զարգացնել հողային շուկան՝

ա. մշակել չօգտագործվող հողատարածքների յուրացման տնտեսական և իրավական կառուցակարգեր,

բ. մշակել գյուղատնտեսական նշանակության հողերի թվայնացված քարտեզներ,

գ. բարելավել գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային տվյալների բազան,

դ. կարգավորել հողերի խոշորացման օրենսդրական դաշտը և իրականացնել կառուցակարգի ներդրման ծրագիր,

ե. գյուղատնտեսական նշանակության հողերի մոնիթորինգի իրականացում:

2) բարելավել ոռոգման համակարգը՝

ա. բարելավել ոռոգման համակարգի կառուցվածքը (պետական և ջրօգտագործողների մակարդակում) և ոռոգման կազմակերպումը,

բ. սահմանել ոռոգման ծրագիր և բյուջե՝ ըստ առկա ջրային ռեսուրսների, տնտեսական հնարավորությունների և ծախսածածկման սկզբունքի,

գ. վերականգնել և արդիականացնել ոռոգման համակարգերը, իրականացնել նոր նախագծեր,

դ. ստեղծել ոռոգման նպատակով օգտագործվող ջրային ռեսուրսների և ջրօգտագործողների տվյալների թվայնացված բազա:

3) զարգացնել վարկային շուկան՝

ա. վերանայել առկա վարկային աջակցության ծրագրերը,

բ. վերացնել վարկային շուկայի զարգացման խոչընդոտները,

գ. ստեղծել գյուղատնտեսական վարկերի երաշխիքային հիմնադրամ:

4) աջակցել ռիսկերի մեղմման և կլիմայի փոփոխություններին հարմարվողականության գործընթացներին՝

ա. ներդնել գյուղատնտեսության ապահովագրության համակարգ,

բ. մշակել և ներդնել հակակարկտային արդյունավետ համակարգ,

գ. ուսումնասիրել և զարգացնել կլիմայի փոփոխություններին հարմարվողականության և դիմադրողականության բարձրացման տարաբնույթ հնարավորություններ (օրինակ՝ երաշտադիմացկուն սորտեր, արդի գյուղատնտեսական փորձ, կլիմայի փոփոխություններին հարմարվող «խելացի» և «զգայուն» տեխնոլոգիաների ու փորձի տեղայնացում):

5) հիմնական արժեշդայում գյուղատնտեսական ոլորտի արտադրողների և վերամշակողների տնտեսական կենսունակության բարձրացում՝

ա. իրականացնել գյուղատնտեսության գերակա արժեշդթաների վերլուծություն,

բ. իրականացնել ներդրումներ որոշակի սննդային արժեշդթաներում՝ տնտեսական կենսունակությունն ամրապնդելու և մրցունակությունը բարձրացնելու նպատակով,

գ. զարգացնել բուն գյուղատնտեսությունից դուրս կանխատեսելի արտադրություն (խոտաբույսերի և համեմունքների, գույների և բույրերի, օժանելիքի, բժշկական ու կոսմետիկ միջոցների արտադրություն և այլն):

6) ապահովել գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների հասանելիություն՝

ա. մշակել որոշակի արժեշդթաների համար նոր մեքենաների և սարքավորումների ձեռքբերման աջակցության ծրագիր,

բ. խրախուսել մեքենաների ու սարքավորումների տեղական և միջազգային արտադրողներին՝ տեղական շուկա մուտք գործելու կամ Հայաստանում արտադրություն հիմնելու նպատակով,

գ. նախաձեռնել գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի մասին օրենքի մշակում:

7) բարելավել սերմերի և տնկանյութերի որակը, խթանել ժամանակակից անասնաբուծության զարգացումը՝

ա.բարելավել սերմերի և տնկանյութերի հավաստագրման համակարգը,

բ.աջակցել թռչնաբուծարանների և անասնապահական տոհմային տնտեսությունների ստեղծմանը:

27. Ապահովել սննդամթերքի անվտանգությունը.

Սննդամթերքի անվտանգության ապահովումն այս բնագավառում առկա հետևողական առաջընթացի ապահովումն է, որը կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսական մթերք սպառողների համար: Գյուղատնտեսական արտադրանքի որակի բարելավումը ՀՀ գյուղատնտեսական ոլորտի քաղաքականության գերակայություններից մեկն է: Տեղական և, հատկապես, արտահանման շուկաների հնարավորությունների տեսակետից սննդամթերքի անվտանգությունը Կառավարության ամենահրատապ և կարևորագույն խնդիրներից է և պահանջում է ժամանակակից արդիական բուսասանիտարական ստանդարտների ու սննդամթերքի ենթակառուցվածքների վրա հիմնված արագ լուծումներ:

Սննդամթերքի անվտանգության բնագավառը կարգավորող քաղաքականության գլխավոր դերակատարումն է ազգաբնակչությանը պաշտպանել առողջապահական այն խնդիրներից, որոնց առաջացման պատճառներն են սննդամթերքի անվտանգության հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք հիմնված են □ ագարակից անմիջապես դեպի ավստ□ կամ □ դաշտից դեպի սեղան□ սկզբունքների վրա, ինչպես նաև ապահովել թե՛ բուսական, թե՛ կենդանական ծագում ունեցող մթերքների անվտանգությունը գյուղատնտեսական արտադրանքի և հումքի ամբողջ արժեշղթայում (սննդամթերքի արտադրություն-պահեստավորում-բաշխում-վերամշակում-վաճառք):

Սննդամթերքի անվտանգության կայուն համակարգերի մշակումն ու ներդրումը պետք է նպատակաուղղվի անվտանգ և բարձրորակ սննդամթերքի ապահովմանը, իրանի Հայաստանի արտադրանքի

հզորացած մրցունակությունը ներքին և արտաքին շուկաներում: Արտահանման շուկայի դիվերսիֆիկացման ծրագրերը մասնակիորեն կախված են Հայաստանի սննդամթերքի անվտանգության ☐ էկոհամակարգի ☐ զարգացումից:

Անասնաբուժական գիտությունների կարևորագույն նպատակն է ապահովել մարդկանց և կենդանիների պաշտպանությունն ընդհանուր վարակիչ հիվանդություններից՝ երաշխավորելով համաճարակաբանական տեսակետից կայուն հանրային առողջապահական միջավայր: Թիրախավորված հանրային միջոցառումների համակարգի շնորհիվ միայն կապահովվի մարդկանց և կենդանիների շրջանում տարածված ընդհանուր վարակիչ հիվանդությունների արագ ախտորոշումը, հակազդումը և վերացումը:

Ներկայումս հրատապ խնդիր է ընտանի կենդանիների համընդհանուր համարակալման, գրանցման և անձնագրային համակարգի ստեղծման, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի ☐ հետևման ☐ կենտրոնացված տվյալների ազգային շտեմարանի ստեղծումը: Այն կնպաստի կենդանիների շարժի խիստ վերահսկմանը, «թաքնված» գլխաքանակի հայտնաբերմանը, կանխարգելիչ մեխանիզմների մշակմանն ու զարգացմանը, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պատվաստումների արդյունավետության բարձրացմանը՝ հիվանդությունների տարածման կանխարգելման բարելավված գործընթացների, ախտորոշումների պլանավորման, պատվաստանյութերի բաշխման և գյուղատնտեսական կենդանիների համաճարակաբանական միջոցառումների ժամանակ առաջացած վնասների արագ փոխհատուցման միջոցով:

Արդիական անասնաբուժական համակարգ ունենալու համար անհրաժեշտ պայմաններից մեկը մասնավոր անասնաբուժական համակարգերի խթանումն է, որը կթոթափի պետության բեռը բարձրորակ

և հասանելի անասնաբուժական օգնություն տրամադրելու գործընթացում: Դա նաև հնարավորություն կտա ընդգրկել մեծ թվով երիտասարդ, արհեստավարժ մասնագետների, ինչպես նաև կնպաստի ազգային անասնաբուժական ինստիտուտի ստեղծմանն ու զարգացմանը:

Բուսասանիտարիան ուղղված է առողջ բուսականության և միջավայրի, ինչպես նաև բնական ծագում ունեցող մթերքի և այլ կարգավորվող նյութերի արտադրության ապահովմանը, ինչը հնարավոր է իրականացնել բույսերի պաշտպանության ☐կարանտին☐ կոչվող պետական գործողությունների փաթեթի միջոցով: Վերջինիս նպատակն է հայտնաբերել, մեկուսացնել և ոչնչացնել բույսերի, բուսական ծագում ունեցող մթերքի և այլ կարգավորվող նյութերի վրա բացասական ազդեցություն գործող վնասակար օրգանիզմները:

Այս բնագավառի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված այդ ☐կարանտինացված☐ և կարգավորվող ☐ոչ կարանտինացված☐ վնասակար օրգանիզմների շարունակական հայտնաբերումը և ոչնչացումը: Բուսասանիտարիան նաև վերահսկում է բույսերի, բուսական ծագում ունեցող մթերքի և այլ կարգավորվող նյութերի արտադրությունն ու մշակումը, ինչպես նաև ապահովում է բուսասանիտարական նորմերի և կանոնների պահպանումը երկրում գործող բոլոր վաճառակետերում:

Հայաստանի լաբորատոր ոլորտի կարևորագույն խնդիրն է առկա լաբորատորիաների ոչ պատշաճ կառավարումը: Դոնորների և այլ գործընկերային կազմակերպությունների օգնությամբ Հայաստանը հիմնել է բազմաթիվ հանրային լաբորատորիաներ, սակայն դեռևս առկա են դրանց կառավարման և համակարգման խնդիրներ: Նոր վարչական մեխանիզմի ստեղծումը, որը կաջակցի վերոհիշյալ լաբորատորիաների միջև կապի ապահովմանը, կօգնի ավելացնել լաբորատորիաների վերահսկողության մակարդակը և դրանց աշխատանքը կդարձնի առավել արդյունավետ: Պետք է նշել, որ Հայաստանում առկա է մասնավոր լաբորատորիաների

գարգացած համակարգ: Կառավարությունը կստեղծի նոր համակարգ, որտեղ հանրային և մասնավոր լաբորատորիաները կարող են համատեղ գոյատևել՝ համագործակցության և արգասաբեր մրցակցության հիմունքներով: Սննդամթերքի անվտանգության բնագավառում միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությունը Հայաստանին հնարավորություն կընձեռի ոչ միայն բարելավել սննդամթերքի որակը, հետևաբար՝ նաև ազգաբնակչության առողջական վիճակը, այլև ինտեգրել հայկական բարձրորակ և բարձր համային արժեք ունեցող գյուղատնտեսական արտադրանքը միջազգային առևտրի և արտահանումների բնագավառում:

27.1.Առաջադրված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները՝

1) ներդնել սննդի անվտանգության ռիսկերի կառավարման միջազգայնորեն ճանաչված համակարգեր՝

ա. ստեղծել սննդամթերքի լիարժեք հետազոծային կառավարման համակարգ՝ «սպառողից մինչև դաշտ» սկզբունքով,

բ. ներդնել GAP (գյուղատնտեսական լավ պրակտիկա) ստանդարտը,

գ. ներդնել HACCP (վտանգի վերլուծություն և կրիտիկական կետերի հսկում) ստանդարտը,

դ. հասարակությանը տրամադրել հստակ, հուսալի տեղեկատվություն և սննդի անվտանգության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ,

ե. ստեղծել սննդամթերքի անվտանգության ոլորտի մոնիտորինգի արդյունավետ կառուցակարգ:

2) բարձրացնել անասնաբուժական ծառայությունների մակարդակը՝

ա. բարելավել կենդանիների առողջության և կենդանիների նույնականացման համակարգերը (օրինակ՝ անասնաբուծության

ժամանակակից ազգային ռեզիստր և անասնաբուծության վերահսկման/հետազոտելիության հարթակ),

բ. մշակել և իրականացնել վարակիչ հիվանդությունների դեմ ռազմավարություն (բրուցելյոզ, խոզերի աֆրիկյան տենդ),

գ. ներդնել անասնաբուժական դեղամիջոցների (հատկապես հակաբիոտիկների) շրջանառության վերահսկման կառուցակարգեր,

դ. զարգացնել գյուղացիական տնտեսավարողներին անասնաբուժական մատչելի և բարձրորակ ծառայությունների մատուցման մասնավոր հատված:

3) բարելավել բույսերի պաշտպանության համակարգը և դրա արդյունավետ կիրառումը՝

ա. իրականացնել բույսերի կարանտինային և ոչ կարանտինային վնասատուների մոնիտորինգ և գնահատել դրանց բուսասանիտարական վիճակը,

բ. մշակել բույսերի պաշտպանության առաջադեմ համակարգեր՝ ըստ առանձին մշակաբույսերի,

գ. մշակել բույսերի վնասակար օրգանիզմների զարգացման կանխատեսման և արագ ահազանգման համակարգ,

դ. թունաքիմիկատների (այդ թվում՝ ներմուծվող) հաշվառում և միասնական ռեզիստրի ստեղծում,

ե. մշակել բույսերի պաշտպանության համակարգ՝ օգտագործելով վնասատուների և հիվանդությունների վերահսկողության համար թվային տեխնոլոգիաներ և մոնիթորինգի համակարգ:

4) ուժեղացնել լաբորատոր հնարավորությունները և սննդի անվտանգության, կենդանիների առողջության և բուսասանիտարական հսկողության ոլորտում իրականացնել միջազգային ստանդարտներին համապատասխան նմուշառում և ստուգում՝

ա. առավել արդյունավետ կառավարել լաբորատոր կարողությունները՝ սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում,

բ. ներդնել պետական ու մասնավոր լաբորատորիաների և Կառավարության միջև արդյունավետ համագործակցության համակարգ:

5) սննդի անվտանգության ոլորտում ներդնել ճկուն կանոնակարգեր՝ հիմնված միջազգային առաջավոր փորձի վրա՝

ա. մշակել սննդի անվտանգության ճկուն օրենսդրություն,

բ. մշակել աջակցության քաղաքականություն, որը կխրախուսի փոքր գյուղացիական տնտեսություններին մտնել օրինական դաշտ (ճկուն օրենսդրությանը համապատասխան),

գ. սերտ համագործակցություն հաստատել սննդի անվտանգության միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետ:

28. Բարելավել պարենային անվտանգությունը և սնուցումը.

Պարենային անվտանգությունը իրավական, կազմակերպական, նյութատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ուղղված է անհրաժեշտ որակի և բավարար քանակությամբ, առողջության համար անվտանգ լիարժեք պարենով ապահովմանը, որը հասանելի է հասարակության յուրաքանչյուր անդամի, այդ թվում՝ բնակչության առավել խոցելի հատվածների համար, և կարող է սպառվել նրա կողմից ցանկացած պահի և ցանկացած իրավիճակում, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ: Երկրի պարենային անվտանգությունը հիմնականում ապահովվում է գյուղատնտեսության, սննդամթերքի արտադրության և սննդի ներմուծման համակարգերի զարգացման միջոցով:

Պարենային անվտանգության ապահովման ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականության հիմնական խնդիրներն են սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովումը,

բնակչության սպառման համար մատակարարվող սննդամթերքի անվտանգության և դիվերսիֆիկացված պարենի մատչելիության ապահովումը, պարենամթերքի պետական պահուստի ստեղծումը, պահպանումը և համալրումը:

Պարենային անվտանգության ապահովման համար կարևորվում է նաև պարենային անվտանգության մոնիտորինգի համակարգի բարելավումը: Վերջինս պետք է ներառի բնակչությանը կենսապես կարևորագույն սննդամթերքի մատակարարման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն, ինչպես նաև պարենային անվտանգության ապահովման ոլորտում իրավիճակի կանխատեսում և պարենային ճգնաժամի կանխարգելման միջոցառումների իրականացում, իսկ վերջինիս առաջացման դեպքում՝ նաև հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումներ:

Պարենային ապահովության մոնիտորինգի ներկայիս համակարգերը չեն համապատասխանում արդիական մեթոդաբանությանը: Հետևաբար՝ Կառավարությունը կկենտրոնանա մոնիտորինգի համակարգերի արդիական մեթոդաբանության արագ ներդրման վրա, որոնք հետագայում կբարելավվեն և կկատարելագործվեն: Այն նաև կներառի կարողությունների զարգացման և տվյալների համակարգի ներդրման տարրեր, որոնք հնարավորություն կընձեռեն բացահայտել, թե մոնիտորինգի որ մեթոդաբանությունը պետք է բարելավել:

Պարենային անվտանգության հիմնական նպատակներն են ապահովել սննդամթերքի մատչելիության և դիվերսիֆիկացված պարենի ինքնաբավության նվազագույն մակարդակ, բարձրացնել սնուցման տեսանկյունից դիվերսիֆիկացված պարենի և պարենային անվտանգության մատչելիությունը, բարձրացնել պարենային անվտանգության մակարդակը:

Այդ նպատակների իրականացման համար նախարարությունը կհամագործակցի տարբեր գործընկերների հետ. դրանք կներառեն պարենի

Ֆիզիկական և տնտեսական մատչելիության մակարդակի բարելավմանն ուղղված ծրագրեր, պարենամթերքի տեղական արտադրության ծավալների ավելացում և առևտրի հաշվեկշռի բարելավում, կենսականորեն կարևորագույն պարենամթերքի, մասնավորապես՝ հացամթերքի, մսի, բուսական և կենդանական յուղի, շաքարի, ձկան և այլ մթերքների տեղական արտադրության խթանում և սահմանված կարգով չնվազեցվող պաշարների ձևավորում, ինչպես նաև այնպիսի ծրագրեր, որոնք կապահովեն կերարտադրության ծավալների կայուն աճ:

Կառավարությունը միջոցառումներ կիրականացնի ներկրման և արտահանման շուկաների դիվերսիֆիկացման, պարենային պետական պահուստի կենսականորեն կարևորագույն պարենամթերքի տեսականու համալրման և ծավալների ավելացման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա արտակարգ իրավիճակներում կամ գնի կտրուկ տատանումների դեպքում կատարել ապրանքային ինտերվենցիաներ:

Հայաստանում գործում է շուրջ 318 հազ. գյուղացիական տնտեսություն, որից 42 %-ի կամ շուրջ 134 հազ. գյուղացիական տնտեսությունների կողմից մշակվող հողատարածքի չափը փոքր է 0,5 հեկտարից, ինչպես նաև որևէ գործող իրավական ակտով սահմանված չեն գյուղացիական տնտեսության և գյուղացիական տնտեսավարողի սահմանումն ու կարգավիճակը: Դրանց հստակեցումը հնարավորություն կընձեռի ստեղծել և վարել գրանցամատյան և ներդնել վերջիններիս կողմից թողարկվող արտադրանքի հաշվառման առավել արդյունավետ համակարգ:

Պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից կարևորվում է նաև ՀՀ ամբողջ տարածքում գյուղացիական տնտեսությունների համար եկամտաբերության մակարդակի համահավասարեցումը: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել գյուղատնտեսական նշանակության հողատարածքների քարտեզագրում՝ ներառելով բնակլիմայական պայմանները, հողի կազմը և կառուցվածքը,

ինչպես նաև տեղեկատվություն տվյալ տարածքների համար առաջարկվող առավել եկամտաբեր մշակաբույսերի մշակության կամ անասնաբուծական ուղղվածության մասին: ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողատարածքների քարտեզագրումը հնարավորություն կտա մշակել գյուղատնտեսության համար նպաստավոր և անբարենպաստ տարածքների զարգացման տարբերակված ուղիներ, տրամադրել առավել եկամտաբեր գյուղատնտեսության վարման վերաբերյալ անհրաժեշտ խորհրդատվություն, ինչպես նաև իրականացնել միջոցառումներ դրանց ներդրումը խթանելու ուղղությամբ:

Քաղաքականության հեռանկարի տեսանկյունից կարևոր է վերանայել և փոփոխել ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը՝ ներառելով պարենային անվտանգության բոլոր հենասյուներն ու գործողությունները, որոնք ուղղված են պարենի մատչելիությանն ու օգտագործմանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակների և ճգնաժամերի դեպքում իրավիճակի կարգավորմանը:

28.1.Առաջադրված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները՝

1) ապահովել սննդի մատչելիության նվազագույն մակարդակը և սննդաբար դիվերսիֆիկացված պարենի ինքնաբավությունը՝

ա. բարելավել կենսական նշանակության տեղական սննդամթերքի արտադրությունը,

բ. բարելավել պարենային հաշվեկշռի ցուցանիշները որոշ ապրանքների համար, երբ ներմուծման փոխարինումը տնտեսապես արդյունավետ է:

2) բարձրացնել դիվերսիֆիկացված սննդի հասանելիությունը՝

ա. ստեղծել, պահպանել և համալրել պարենի պետական պահուստները,

բ. կանխարգելել պարենային թափոնները և կորուստները,

գ. ստեղծել գործընկերային սերտ հարաբերություններ գործընկերների հետ՝ ապահովելով համագործակցությունն այլ նախաձեռնությունների հետ, ինչպիսիք են դպրոցականներին սննդով ապահովելը և սնուցման վերաբերյալ ուսուցումը:

3) իրականացնել պարենային անվտանգության մոնիտորինգ՝

ա. բարելավել պարենային անվտանգության մոնիտորինգի համակարգերը,

բ. որոշել չափորոշիչները, սահմանել անբարենպաստ տարածքները, կազմել դրանց քարտեզները և մշակել միջոցառումներ այդ տարածքների հետագա զարգացման համար:

29. Զարգացնել տեղական շուկաները և բարձրացնել արտահանման հնարավորությունները. Առավել կայուն գյուղատնտեսական արտադրության հասնելու և նոր շուկաներ մուտք գործելու հնարավորությունից օգտվելու համար անհրաժեշտ է զարգացնել տեղական գյուղատնտեսական շուկաները: Անշուշտ, գործող գյուղատնտեսական և պարենամթերքի շուկաների կայունությունն ու արդյունավետությունը պայմանավորված են պատշաճ գործարկվող և աշխատող շուկայական համակարգով: Վերջինիս շնորհիվ հնարավոր է վերլուծել շուկաների ձախողումներն ու զարգացումները, ապահովել պարենային անվտանգությունը, կայունացնել պարենամթերքի գները, խթանել տեղական սննդամթերքի արտադրությունը և նպաստել սոցիալական զարգացմանը:

Ներկայումս Հայաստանի գյուղատնտեսական ոլորտում առկա են շուկայի զարգացման, ներդրումների գրավման և արտահանման խթանման

խնդիրներ, որոնց լուծման համար գյուղատնտեսության զարգացման ռազմավարության մեջ ընդգծվում է հետևյալ գործողությունների կարևորությունը.

1) բարելավել հավաստագրման համակարգի զարգացումը և հետևել պարենային անվտանգության պահանջների կատարմանը, ինչը հնարավորություն կտա դիվերսիֆիկացնել արտադրանքի արտահանման շուկաները,

2) մշակել և իրականացնել արտահանման ռազմավարություն՝ շեշտը դնելով արտահանումը խթանող թիրախային ծրագրերի վրա,

3) բարելավել արտահանման լոգիստիկան:

Տնտեսական և սոցիալական զարգացման ամենակարևոր նախապայմաններն են սննդամթերքի արտադրությունը և պարենային անվտանգության պահանջների կատարումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարենային անվտանգությունը հանրային առողջության պաշտպանության կարևոր գործոններից մեկն է: Ներկայումս գիտական և տեխնոլոգիական առաջընթացի արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, որտեղ քիմիական նյութերն ավելի ու ավելի շատ են օգտագործվում գյուղատնտեսական արտադրությունում: Արդյունքում՝ գյուղատնտեսական արտադրությունից մինչև վերջնական սպառումը սննդամթերքն աղտոտվում է: Այս խնդիրը գտնվում է հատկապես զարգացած երկրների և միջազգային պարենային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում, ուստի պարենային անվտանգությանն առնչվող օրենքներն ու կարգավորումները պետք է նորացվեն և խստորեն կիրարկվեն տեղական մակարդակում:

Հաշվի առնելով Հայաստանի ներքին շուկայի սահմանափակ չափերը՝ արտահանման խթանումը պետք է դառնա գյուղմթերքի շուկայի զարգացման անբաժանելի և կարևորագույն մասը:

Հայաստանի Հանրապետությունը հիմնականում ներմուծող երկիր է. դա վերաբերում է նաև գյուղմթերքին (ներմուծումը մոտ երեք անգամ

գերազանցում է արտահանումը): Ուստի ՀՀ կառավարության գյուղատնտեսական ռազմավարության առաջնահերթությունը արտահանման ագրեսիվ խթանման և առավել թիրախային ապրանքների ներմուծման միջոցառումներն են: Այսպիսով՝ նոր գյուղատնտեսական ռազմավարությունը հիմնականում ուղղված է արտահանման շուկաների զարգացմանը՝ դեպի միջազգային շուկաներ գյուղմթերքի արտահանման ծավալները մեծացնելու միջոցով:

Գյուղմթերքի արտահանման շուկայի զարգացման ցածր մակարդակը պայմանավորված է տարբեր գործոններով, այդ թվում՝ արտահանման մեխանիզմների բացակայությամբ և փոքր գյուղացիական տնտեսավարողների կրթական ցածր մակարդակով, ինչի արդյունքում Հայաստանի գյուղմթերքի շուկան ապավինում է խոշոր արտադրողներին և արտահանող ընկերություններին: Մյուս խնդիրը հայաստանյան արտադրողների և արտահանողների միջև համագործակցության բացակայությունն է կամ դրա ցածր մակարդակը:

Ներկայումս ներքին շուկայի ռազմավարության վիճակը և գործողությունները չեն համապատասխանում միմյանց. դրանցից յուրաքանչյուրը գործում է այնպիսի եղանակներով, որոնք սահմանափակում են գործակցությունը և համագործակցությունը: Բացի այդ՝ առկա է նաև գյուղատնտեսական արտադրանքի մարկետինգի և արտահանման շուկաների վերաբերյալ սահմանափակ տեղեկատվության խնդիր: Արտահանման լոգիստիկայի ոլորտում առկա խնդիրները ևս ազդում են արտահանման ծավալների վրա, ուստի այն ևս պետք է նորացնել ու բարելավել:

Արտահանման լոգիստիկայի բարելավման համար անհրաժեշտ արտադրության և մատակարարման համատեղելի մակարդակները պահպանելու համար անհրաժեշտ է մատակարարման և արտադրության համատեղելի մակարդակների ձեռքբերում:

Գյուղատնտեսության զարգացման սույն ռազմավարության մեջ ներդրումների ընդլայնումը դիտարկվում է որպես ոլորտի զարգացման բանալի, ուստի մեծանում է գյուղատնտեսական ներդրումների հնարավորությունների ավելացման նպատակով գործիքների մշակման կարևորությունը: ՀՀ կառավարությունը ստանձնել է գյուղատնտեսական ներդրումային ծրագրերի մշակման և խթանման պատասխանատվությունը. այդ ծրագրերն ուղղված են ոչ միայն գյուղատնտեսական ներդրումային հնարավորությունների բարելավման ռազմավարության իրականացմանը, այլև ոլորտում ներդրումների ավելացման մեջ դեռևս տիրող սահմանափակումների և հիմնախնդիրների քննարկմանն ու վերահաստատմանը:

Գյուղատնտեսական արտադրանքի ավելացված արժեքը ևս կանխում է ոլորտի զարգացումը և ստեղծում նոր շուկաներ մուտք գործելու սահմանափակումներ: Գյուղատնտեսական արտադրանքի համար արժեքի ավելացման գործողությունների մշակումը և բարելավումը ոչ միայն կլինի ի օգուտ խոշոր գյուղացիական տնտեսությունների, այլև կնպատակաուղղվի առևտրային գործունեություն ծավալող փոքր գյուղացիական տնտեսություններին, որոնք կարող են լինել Հայաստանում գյուղատնտեսական ոլորտի աճի և զարգացման՝ տնտեսապես շատ ավելի դինամիկ հենասյունը: Գյուղատնտեսական արտադրանքի ավելացված արժեքը գյուղացիներին հնարավորություն կտա ավելացնել իրենց եկամուտները գյուղատնտեսական արտադրության մնացորդների արտադրողական օգտագործման միջոցով:

Նոր շուկաներ մուտք գործելու և տեղական գյուղատնտեսական արտադրությունը զարգացնելու համար ամենակարևոր գործողություններից կլինի որակի հսկողության համակարգին առնչվող օրենսդրության ստեղծումը և կարողության ձևավորումը՝ ազգային և տարածաշրջանային մակարդակում դրանք իրացնելու նպատակով:

Օրգանական արտադրության ավելացմանն ուղղված միջոցառումների, աշխարհագրական ցուցանիշների և որակի հսկողության այլ համակարգերի մշակումը նույնպես գյուղատնտեսական ոլորտի զարգացման առաջնահերթություններից է: Օրգանական արտադրանքը ներկայումս մեծ պահանջարկ ունի աշխարհի ամենամեծ և ամենաշահութաբեր շուկաների կողմից. դրանց նկատմամբ պահանջարկն ավելանում է, սակայն ոչ օրգանական ապրանքների (օրինակ՝ ԳՄՕ) համեմատ՝ առաջարկը սահմանափակ է: Տեղական օրգանական արտադրության ավելացման միջոցառումների մշակման և իրականացման հետ մեկտեղ՝ նախատեսվում է Հայաստանի գյուղատնտեսական ոլորտի համար նոր շուկաներ բացել և նոր հնարավորություններ ստեղծել՝ մասնավորապես փոքր գյուղացիական տնտեսությունների համար: Այդ նպատակով պետք է զարգացնել նոր ենթակառուցվածքներ և ինստիտուցիոնալ շրջանակներ, որպեսզի Հայաստանի օրգանական ապրանք արտադրողներին հնարավորություն տրվի մասնագիտանալ արտահանման համար նախատեսված արտադրության մեջ: Օրգանական գյուղատնտեսության կայուն զարգացման համար Կառավարությունը նոր ռազմավարություն կմշակի: Այն կներառի հաջորդական գործողություններ՝ ուղղված Հայաստանի համաշխարհային ճանաչմանը՝ որպես բարձրորակ սննդամթերք արտադրող երկիր: Այլ կերպ ասած, օտարերկրյա բոլոր թիրախային շուկաներում պարենամթերքի մասով կուժեղանա «Արտադրված է Հայաստանում» ապրանքանիշի դիրքը՝ որպես բարձր որակի նշան:

Պատշաճ կազմակերպված գյուղատնտեսական մեծածախ, մանրածախ վաճառքի և գյուղատնտեսական շուկաների խթանումը թույլ կտա ունենալ գյուղմթերքի առավել կենտրոնացված շուկա: Ժամանակակից մեծածախ շուկայի ստեղծումն առաջնահերթություն ու առանցքային խնդիր է Նախարարության և ՀՀ կառավարության համար: Մեծածախ շուկաները բարելավում են սննդամթերքի բաշխման

արդյունավետությունը. դրանք նաև խրախուսում են մրցակցությունը՝ խթանելով ավելի մեծ թափանցիկություն և ավելի լավ գների ձևավորում, ինչն իրականացվում է առաջարկի և պահանջարկի միջև առավել հստակ հարաբերության միջոցով: Մեծածախ և մանրածախ գյուղատնտեսական շուկաների զարգացումը կբարելավի սննդամթերքի բաշխման համակարգի արդյունավետությունը և կապահովի նոր շուկաների հասանելիություն՝ միաժամանակ ծառայելով որպես գների նվազեցման գործիք:

Լավ զարգացած մեծածախ և մանրածախ գյուղատնտեսական շուկաներն ապահովում են շուկայի մասին տեղեկատվության հասանելիությունը (շուկայի միտումներին, գներին, առաջարկի ու պահանջարկի քանակությանն առնչվող և այլ տեղեկատվություն): Տեղական մակարդակում մեծածախ շուկայի մշակույթի որդեգրումը հնարավորություն կտա մեծացնել ապրանքների մատակարարման և վաճառքի կայունությունը, մրցակցությունը և ի վերջո կհանգեցնի գնման և վաճառքի գործընթացներում բարելավված արդյունավետության: Դա էլ իր հերթին կբարելավի տեսչական ստուգումը, որակի հսկողությունը, ապրանքների տեսակավորումը և աստիճանակարգումը, կխրախուսի ստանդարտ միջոցառումների կիրառումը, ինչը թույլ կտա համախմբման միջոցով նվազեցնել միջնորդների թիվը պարենային շղթայում:

Գյուղմթերքի տեղական շուկայի զարգացման համար ևս մեկ կարևոր հնարավորություն է տեղական գյուղատնտեսական շուկաների խթանումը և զարգացումը: Կառավարության նոր ծրագրերի աջակցությամբ՝ նմանատիպ շուկաները հնարավորություն կտան գյուղմթերքը վաճառել անմիջապես վերջնական սպառողին: Գյուղատնտեսական շուկաները տեղական գյուղատնտեսության և տնտեսական համապարփակ զարգացման կարևոր բաղադրիչ մասն են. ուստի, չնայած արտահանման միջազգային շուկայի զարգացումը համընդհանուր առաջնահերթություն է, սակայն Կառավարությունը ուշադրություն կդարձնի նաև տեղական շուկաների □էկոհամակարգերի□ զարգացմանը՝ մասնավոր հատվածի և

Կառավարության գերատեսչությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ գործընկերության շրջանակում:

Կառավարության կարևոր առաջնահերթություններից մեկն էլ կլինի գյուղատնտեսության ոլորտի տարբեր «խաղացողների» միջև համագործակցության խթանումը: Նախարարությունը քայլեր կձեռնարկի հաջողած արտադրողների խմբերի և համակենտրոնացման և համագործակցային նորարարական մոտեցումների ստեղծման ու պահպանման նպատակով: Գյուղմթերք արտադրողների համագործակցությունը և համակարգումը հզորացնելու միջոցով հնարավոր կլինի առավել օպտիմալ օգտագործել առկա գյուղատնտեսական ռեսուրսները, ինչպես նաև համատեղ ներդրումային հնարավորությունները: Համագործակցությունը կընդլայնի մարկետինգի հնարավորությունները:

Սույն ռազմավարությամբ հատուկ շեշտադրված կարևոր գործողություններից մեկն էլ առնչվում է գյուղատնտեսական արժեչողթանների հզորացմանը, որը նոր շուկաներ և հնարավորություններ կստեղծի տեղական գյուղմթերք արտադրողների համար: Գյուղատնտեսական համագործակցության համատեղ խորհուրդների կազմավորումը կմեծացնի ոլորտում կայուն ներդրումների հնարավորությունները: Հետևաբար սույն ռազմավարությունն ընդհանուր գծերով նկարագրում և խրախուսում է գյուղատնտեսությամբ զբաղվողների՝ ոլորտային, տեղական, տարածաշրջանային և այլ տիպի համագործակցությունը:

29.1.Առաջադրված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները՝

1) աջակցել նոր շուկաներ ներթափանցմանը, ներդրումների ներգրավմանը և արտահանման ավելացմանը՝

ա. ներդնել արտադրանքի և շուկաների դիվերսիֆիկացման հնարավորությունների բարձրացման համար սննդամթերքի անվտանգության պահանջների և դրանց իրականացման համակարգ,

բ. մշակել և իրականացնել արտահանման ռազմավարություն, որի որոշիչ մասը նպատակաուղղված կլինի արտահանման խթանմանը,

գ. բարելավել արտահանման լոգիստիկան:

2) մշակել գյուղատնտեսական ներդրումների ներգրավման հնարավորությունները մեծացնելու գործիքներ՝

ա. մշակել և իրականացնել գյուղատնտեսական ներդրումների ծրագիր:

3) մշակել և իրականացնել ապրանքների ավելացված արժեքի բարձրացման ծրագիր՝

ա. ներդնել որակական համակարգի օրենսդրություն և ստեղծել ազգային ու տարածքային մակարդակներում դրանց իրագործման կարողություն,

բ. մշակել և իրականացնել միջոցառումներ օրգանական արտադրության, աշխարհագրական չափորոշիչների և որակական այլ կառուցակարգերի զարգացման նպատակով,

գ. մշակել սննդամթերքի որակի հայկական բրենդ,

դ. ներդնել կաթի, խաղողի և այլ ապրանքների գնագոյացման նոր համակարգ, որը հիմնված կլինի որակական ստանդարտների վրա:

4) խթանել գյուղատնտեսական մեծածախ ու մանրածախ շուկաների ստեղծումը և զարգացումը՝

ա. իրականացնել ժամանակակից մեծածախ շուկաների ստեղծման կարողությունների ուսումնասիրություններ,

բ. նպաստել գյուղատնտեսական տեղական շուկաների կայացմանը և չմիջնորդավորված վաճառքին:

5) խթանել կոռուպցիան, համախմբումը և արժեզրեւորայի ինտեգրումը՝

ա. որդեգրել արտադրողների հաշտոված խմբերի ստեղծման և պահպանման աջակցության քաղաքականություն,

բ. խրախուսել գյուղացիական տնտեսությունների տնտեսավարման տարբեր ձևերի (ոլորտային, տեղական, տարածքային, անասնաբուծական և այլն) ձևավորմանը, որոնք կդառնան անասնապահության տոհմային գրանցամատյանների կրողները և այլն,

գ. ոչ առևտրային կոռուպցիայի միջոցով նպաստել տնտեսավարողների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

30. Չարգացնել մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունները գյուղատնտեսության ոլորտում.

Ռազմավարության հիմնական մասն ուղղված է գյուղատնտեսության ոլորտում առանցքային խնդիրների և մարտահրավերների լուծմանը, որոնք խոչընդոտում են ոլորտի զարգացմանը, մրցունակությանը և հիմնականում միտված են մասնավոր հատվածին: Ռազմավարության այս մասն անդրադառնում է կառուցվածքային խնդիրների լուծմանը, մասնավորապես՝ պետական կառույցների արդյունավետությանը, քաղաքականության մշակման բարելավմանը, պետական աջակցության ծրագրերի արդյունավետությանը, տվյալների կառավարման համակարգերի արդիականացմանը և գյուղատնտեսությամբ զբաղվող անհատների ու կազմակերպությունների համար կրթության, տեղեկատվության և նորարարության հասանելիության ապահովմանը:

Գյուղատնտեսության ոլորտում հավակնոտ և արմատական բարեփոխումների օրակարգի իրականացումը պահանջում է կառուցվածքային և ինստիտուցիոնալ լուրջ վերափոխումներ: Այսպիսով կարևորագույն խնդիր է աշխատակիցների կարողությունների

զարգացման, նախարարության և կից կառույցների աշխատանքի որակի բարձրացման, ծրագրերի իրականացման, մոնիտորինգի և գնահատման համակարգի ներդրման միջոցով բարձրացնել նախարարության արդյունավետությունը: Այս բարեփոխումների արդյունքում քաղաքականությունը և պետական օժանդակության ծրագրերը կլինեն առավել թիրախային, միտված կոնկրետ խնդիրների լուծմանը և կապահովեն աշխատանքի թափանցիկությունը:

Նախկինում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն առանձին պետական մարմին էր, սակայն վերջերս իրականացված կառուցվածքային փոփոխությունների արդյունքում այն միավորվեց Էկոնոմիկայի նախարարությանը: Ուստի առաջնահերթ խնդիր է նախարարության կազմակերպչական կառուցվածքի վերանայումը, որը սակայն կարող է իրականացվել միայն ռազմավարության հաստատումից հետո, որպեսզի հնարավորություն ստեղծվի արմատական բարեփոխումներ իրականացնելու համար: Կառուցվածքային բարեփոխումների արդյունքում նախարարությունը ձեռնամուխ է լինելու կադրերի վերապատրաստմանը և նոր կադրերով համալրմանը:

Մյուս խնդիրը պետական օժանդակության ծրագրերի պլանավորման և իրականացման որակի բարձրացումն է: Նախարարությունը ձևավորելու է ծրագրերի մոնիտորինգի և գնահատման մեթոդաբանություն, որը կնպաստի ճիշտ թիրախների ընտրությանը՝ ապահովելով նախանշված ծրագրերի արդյունքների չափելիությունը և հասանելիությունը: Վերոնշյալ մեթոդաբանությունը կօժանդակի ծրագրի վերջնական շահառուների վրա ազդեցության ապահովմանը:

Այսպիսով՝ նախարարությունը մշակելու է ծրագրերի մոնիտորինգի և գնահատման մեթոդաբանություն, ինչպես նաև իրականացնելու է անձնակազմի վերապատրաստման ծրագրեր, որոնք կնպաստեն նախարարության աշխատանքի թափանցիկության բարձրացմանը և քաղաքականության ու ծրագրերի ազդեցության գնահատմանը:

Նախարարության որոշումների կայացման որակի բարելավման նպատակով ներդրվելու է տվյալների կառավարման համակարգ, որը կապահովի վստահելի տվյալներ և հուսալի վիճակագրություն: Այս պահին գյուղատնտեսության վերաբերյալ հիմնական տվյալները հավաքագրվում են տարբեր կառույցների կողմից: Օրինակ՝ առաջնային արտադրության տվյալները հավաքագրվում են տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ համայնքապետարանների կողմից, որոնք ամփոփ տեղեկագրերը ներկայացնում են մարզային կառավարման կառույցներ՝ մարզպետարաններ, վերջիններս էլ այդ տվյալները տրամադրում են ՀՀ վիճակագրական կոմիտեին: Հաճախ տվյալների հավաքագրման որակը ցածր է: Այսպիսով՝ նախարարությունը պետք է համագործակցի այլ կառույցների հետ և արդիականացնի տվյալների հավաքագրման ու ամփոփման գործընթացները:

Տվյալների հավաքագրման տեսանկյունից կարևոր է բարելավել ինչպես ավանդական եղանակներով տվյալների հավաքագրման մեխանիզմները, այնպես էլ օգտագործել նորարարական լուծումներ, ինչպիսիք են արբանյակային նկարահանումները և տվյալների մեծ բազաները: Կառավարության համար նաև առաջնահերթ է արդիական գյուղացիական տնտեսությունների ռեգիստրը, կենդանիների հաշվառման և համարակալման ծրագիրը: Այս համակարգի ներդրումը կապահովի գյուղմթերքի հետազոտությունը:

Գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի ստեղծումը կնպաստի այլ լուծումների ներդրմանը, ինչպիսին է Վճարման գործակալությունը, որն անհրաժեշտ է պետական օժանդակության ծրագրերը համակարգային դարձնելու համար: Մեկ այլ կարևոր բաղադրիչ է շուկաների, մասնավորապես՝ տեղական և միջազգային շուկաներում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը (օրինակ՝ գյուղմթերքի շուկայական գները): Գյուղացիական տնտեսավարողները նույնպես կօգտվեն այս տվյալներից:

Նախարարության կարևոր կառույցներից է նաև գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունը: Անհրաժեշտ է վերանայել մարզային խորհրդատվական ծառայությունների կառուցվածքը և գործառնությունները, դրանք համապատասխանեցնել Կառավարության առաջնահերթություններին: Խորհրդատվական նոր կառույցները գյուղացիական տնտեսավարողների համար պետք է ծառայեն որպես մեկ պատուհան: Դրանք պետք է ապահովեն տեխնիկական օժանդակություն, մասնագիտական և բիզնես խորհրդատվություն, գյուղացիական տնտեսավարողներին ներկայացնեն ոլորտի նորարարություններն ու արդիական տեխնոլոգիաները:

Ավանդական խորհրդատվական ծառայությունները պետք է ներառեն արդիական մոտեցումներ, ինչպես օրինակ, գյուղացիական տնտեսավարողների ազգային խորհրդատվական թեժ գիծը, թվային հաղորդակցության նոր մեթոդները, գյուղատնտեսական խորհրդատվական տվյալների թվայնացված բազաները: Խորհրդատվական համակարգերը պետք է լինեն նաև ապակենտրոնացված, սակայն անհրաժեշտ է մարզային կենտրոնները համալրել բարձր որակավորում ունեցող մասնագետներով, ովքեր ի գործ են իրականացնել փորձնական և ցուցադրական ծրագրեր, ներկայացնել տեխնոլոգիական նոր լուծումներ: Ցուցադրական տնտեսություններում գյուղացիական տնտեսավարողներին հնարավորություն կընձեռվի ծանոթանալ ոլորտի նորարարություններին և նոր սարքավորումների փորձարկմանը: Այս կենտրոնները պետք է նաև համագործակցեն գյուղատնտեսության ոլորտի կրթական, գիտահետազոտական կառույցների, ինչպես նաև գործարարների հետ:

Այս կենտրոնները նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն կրթության կառույցների հետ համատեղ պետք է մշակեն երիտասարդ ձեռնարկատիրության խթանման ծրագրեր. գյուղական երիտասարդությանը կցուցադրվեն ագրոբիզնեսի օրինակներ,

ինչը կխթանի գյուղատնտեսության ոլորտում երիտասարդների ներգրավմանը, ինչպես նաև նրանց կողմից այլ ոլորտներում ձեռնարկատիրության իրականացմանը: Խորհրդատվական կառույցների մյուս նպատակը պետք է լինի գյուղատնտեսության նկատմամբ բացասական վերաբերմունքի վերացումը: Մասնավորապես նմանատիպ ծրագրեր պետք է իրականացվեն սահմանամերձ և սահմանակից համայնքներում, որոնք ապահովում են մեր երկրի պաշտպանությունը, իսկ բնակչության համար բարենպաստ պայմանների խթանումը կնպաստի ազգային անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Հաշվի առնելով ոլորտին տրամադրվող պետական ֆինանսավորման ցածր մակարդակը, մարտահրավերների մեծ թիվը և բազմազանությունը՝ նախարարությունը պետք է ամրապնդի ու խորացնի հարաբերությունները միջազգային զարգացման և ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև բարեկամ պետությունների հետ: Ուստի նախարարությունը շարունակելու է դոնորների հետ պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումները՝ նպատակ ունենալով ֆինանսական և տեխնիկական օժանդակության ծրագրերն ուղղել ռազմավարության իրականացմանը:

30.1.Առաջադրված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները՝

1) կատարելագործել նախարարության ինստիտուցիոնալ վերլուծական կարողությունները՝ քաղաքականության մշակումն առավել թիրախային դարձնելու և պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերի մոնիտորինգն ու գնահատումն ապահովելու նպատակով՝

ա. կատարելագործել նախարարության կառուցվածքը՝ նպատակ ունենալով համակարգել գյուղի և գյուղատնտեսության զարգացման, բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման հարցերը,

բ. զարգացնել քաղաքականություն մշակող վարչությունների կարողությունները՝ քաղաքականության և ծրագրերի արդյունավետ մոնիտորինգն և գնահատումն ապահովելու նպատակով,

գ. ներկայացնել տվյալների հավաքագրման և կառավարման համապարփակ համակարգեր՝ ոլորտի քաղաքական և բիզնես որոշումների կայացման որակական մակարդակը բարձրացնելու նպատակով:

2) բարելավել թիրախավորված ներգրավվածությունը, վճարումները և գյուղացիական տնտեսավարողների հետ հաղորդակցությունը՝

ա. ստեղծել գյուղացիական տնտեսությունների հաշվառման համակարգ:

3) բարձրացնել նախարարության վճարումների թափանցիկությունն ու արդյունավետությունը՝

ա. Նախարարության կազմում հիմնել գյուղատնտեսության ոլորտի մեկ միասնական վճարային կառույց:

4) ապահովել տեղեկատվության մատչելիությունը և գյուղացիական տնտեսավարողների հետ փոխադարձ հաղորդակցությունը՝

ա. մշակել շուկայի գների հավաքագրման, լրամշակման և տարածման կազմակերպված համակարգ,

բ. մշակել համախառն մարժայի վերաբերյալ տվյալների ազգային բազա և այն հասանելի դարձնել գյուղացիական տնտեսավարողներին,

գ. տարածել տեղեկատվություն բարձրարժեք մշակաբույսերի շուկաների վերաբերյալ:

5) բարձրացնել գիտելիքների և փորձի փոխանակման արդյունավետությունը՝

ա. ներդնել գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ և զարգացնել խորհրդատուների կարողությունները,

բ. աջակցել գյուղատնտեսության ոլորտում գործնական նշանակություն ունեցող հետազոտությունների անցկացմանը,

գ. բարելավել սննդի բիզնեսի օպերատորների, ագրոբիզնեսի և գյուղացիական տնտեսավարողների, լրատվամիջոցների և սպառողների ոլորտային տեղեկացվածության ու մասնագիտական մակարդակը և ներդնել ծրագրեր երիտասարդության բիզնես-նախաձեռնությունների համար,

դ. օգտագործել սփյուռքի ներուժը տեխնոլոգիական, տեխնիկական, կրթական հնարավորությունների զարգացման համար:

6) բարձրացնել դոնորների հետ համակարգված աշխատանքի արդյունավետությունը՝

ա. դոնորների հետ պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումների միջոցով ապահովել գյուղատնտեսական ոլորտի առաջնահերթությունների մասին միջազգային գործընկերների արդյունավետ տեղեկացվածությունը,

բ. ուժեղացնել գյուղատնտեսական ոլորտի հարթակում դոնորների հետ համակարգված աշխատանքի իրականացման կարողությունները և դրա ինտեգրումը պետական կարգավորման համակարգում:

7) մշակել գյուղացիական տնտեսավարողների սեզմենտացիայի շրջանակը և հստակեցնել գյուղացիական տնտեսավարողների կարգավիճակը՝

ա. սահմանել գյուղացիական տնտեսավարողների կարգավիճակը, այսինքն՝ յուրաքանչյուր կատեգորիայի պարտականությունը և շահը:

31. Աջակցություն գյուղական համայնքների կայուն զարգացմանը. Գյուղական տարածքների կայուն զարգացումը մի գործընթաց է, որը հետամուտ է գյուղական համայնքների դրական սոցիալական փոփոխությունների և տնտեսական զարգացման իրականացմանը: Դրա նպատակն է բարելավել գյուղական բնակչության

կյանքի որակը և տնտեսական բարեկեցությունը, ինչպես նաև պահպանել գյուղական տարածքների շրջակա միջավայրը և հարուստ մշակույթը: Կարևոր է նշել, որ Հայաստանի գյուղական շրջաններում ներդրումային և զբաղվածության հնարավորությունները սահմանափակ են, ենթակառուցվածքները՝ թերզարգացած, և կան այնպիսի շրջաններ, որտեղ մարդկանց կյանքի որակի բարելավման հնարավորություններն ավելի փոքր են: Հիմնական մարտահրավերներից մեկը ծերացող բնակչությունն է, ինչը պայմանավորված է հատկապես երիտասարդների արտագաղթով դեպի քաղաքային բնակավայրեր և այլ երկրներ: Մյուս կողմից էլ Հայաստանի բնական և մշակութային ժառանգությունը հսկայական ներուժ է ստեղծում գյուղական շրջաններում ագրոտուրիզմի զարգացման և դրա հետ կապված զբաղվածության հնարավորությունների ստեղծման համար:

Գյուղական շրջաններն առավել բարեկեցիկ և արտադրողական դարձնելու համար անհրաժեշտ է սոցիալական և տնտեսական փոփոխությունների գործընթաց՝ գյուղացիական տնտեսության դիվերսիֆիկացման և մրցունակության բարելավման գործում ներդրումները խրախուսելու նպատակով: Երիտասարդների համար գյուղական շրջաններում մնալու, տնտեսական գործունեության մեջ ներգրավվելու և իրենց համայնքների զարգացմանը մասնակից դառնալու հնարավորությունների ստեղծումը կարևոր խնդիրներ են: Չնայած գյուղատնտեսական ոլորտի զարգացումը կօգնի տնտեսական գործունեության մեջ բնակչության մի մասի ներգրավմանը, սակայն Կառավարությունը պետք է շարունակի փնտրել գյուղական տնտեսությունների դիվերսիֆիկացման այլ ուղիներ: Վերջինս նպաստում է ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական առումով ավելի լավ տարածքային հաշվեկշռի (բալանսի) ձեռքբերմանը՝ տնային տնտեսությունների եկամուտներն ավելացնելու միջոցով: Գյուղացիական տնտեսության և գյուղացիական տնտեսությանը չառնչվող

մակարդակներում դիվերսիֆիկացման գործողությունների ռազմավարական ուղղվածությունը կընտրվի զարգացման ներուժ և մրցակցային առավելություն ունեցող ոլորտների վերհանման նպատակով՝ տարածաշրջանային և ոլորտային խորացված վերլուծություններ կատարելուց հետո: Կառավարությունը պատրաստ է գյուղացիական տնտեսություններին աջակցություն տրամադրել նոր տիպի գյուղատնտեսական արտադրության միջոցով տնտեսության դիվերսիֆիկացման և գյուղացիական տնտեսության հետ ավելի քիչ կապ ունեցող ծրագրերի, օրինակ՝ ագրոտուրիզմի ներդրման նպատակով: Ավելին, գյուղական համայնքներում որպես դիվերսիֆիկացման գործողություններ կարող է ընտրվել արտադրության և ծառայությունների այլ ճյուղերի ստեղծումը, որոնք կապասարկեն գյուղացիական տնտեսավարողներին և գյուղական բնակչության մյուս անդամներին: Ի սկզբանե այս աջակցությունը պետք է նպատակաուղղվի երիտասարդ շահառուներին և առաջնահերթություն պետք է տալ այնպիսի միջամտություններին, որոնք նպաստում են գյուղական զբոսաշրջության, գյուղական փոքր և միկրո-կազմակերպությունների ստեղծմանն ու զարգացմանը:

Գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացումը գյուղական կյանքի որակի բարելավման կարևորագույն բաղադրիչն է: Ուստի ուշադրության կենտրոնում կլինի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գյուղատնտեսական առաջնային ենթակառուցվածքների կարիքների ապահովմանն ուղղված աջակցության մեծացումը: Դա կօգնի բարելավել գյուղական բնակչության կենսամակարդակը, մեծացնել գրավչությունը ներդրողների համար, հնարավորություն կստեղծի բնապահպանական ծրագրերի իրականացման համար: Կառավարությունը կաջակցի ճանապարհների և այլ ենթակառուցվածքային բաղադրիչների որակի բարելավման միջոցառումներին. քաղաքային կենտրոնների հետ կապի բարելավումը

կմեծացնի հողատարածքների և անտառների, ագրոտուրիզմի, գաստրոտուրիզմի և գինու տուրիզմի կենտրոնների հասանելիությունը: Ավելին, այս ծրագրերը կկարևորեն ջրի և թափոնների կառավարման բարելավման, էլեկտրաէներգիայի մատակարարման, հրդեհների կանխարգելման և նոր տեխնոլոգիաների ներդրման գործողությունները:

Բնական ռեսուրսների պաշտպանությունը և պահպանությունը գյուղական տարածքների կայուն զարգացման հավասարապես կարևոր բաղադրիչներից են: Բնական ռեսուրսների կառավարմանն աջակցելու նպատակով Կառավարությունը կիրականացնի իրագելության բարձրացման կամավորական ծրագրեր, որոնք գյուղացիների շրջանում կխթանեն գյուղատնտեսական լավ գործելակերպեր: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ կմշակվեն կամավորական ծրագրեր՝ գյուղմթերք արտադրողների և խորհրդատուների շրջանում նմանատիպ միջոցառումները խթանելու նպատակով: Այդ ծրագրերը կնպատակաուղղվեն գյուղատնտեսական այն գործելակերպերին, որոնք առնչվում են հողերի էրոզիային, հողի օրգանական նյութին, հողերի կառուցվածքին, պահպանության նվազագույն մակարդակին, ինչպես նաև ջրերի, կենսաբազմազանության պաշտպանությանը և կառավարմանը:

Կառավարությունը պլանավորում է շարունակել տարածաշրջանային մակարդակով կատարողականի արդյունավետության բարելավման իր ջանքերը և ապահովել ընդհանուր տարածքային զարգացում, ինչպես նաև խթանել տեղական տնտեսավարողների տնտեսական ակտիվությունը և տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում նրանց ներգրավումը: Զաղաքականության մշակման և իրականացման գործում գյուղական համայնքների ներգրավման մոտեցումները կարող են դիտվել որպես քաղաքացիական հասարակության կարողության հզորացման և գյուղական բնակչության շրջանում սոցիալական երկխոսության նոր եղանակ, ինչը տեղական գործընկերության միջոցով դյուրացնում է

կառավարումը, խթանում է զբաղվածությունն ու զարգացումն մարդկային և բիզնես կապիտալը:

Անհրաժեշտ է նաև ներգրավել հանրային, մասնավոր և սոցիալական հասարակության տեղական ակտիվիստներին՝ համայնքների զարգացման ռազմավարությունների մշակման միջոցով ներկայացնել իրենց համայնքների կարիքները, որոնք կհամակցվեն «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությանը»: Իսկ երբ այդ խմբերը մեծացնեն իրենց կարողությունները, կդառնան գյուղատնտեսության ոլորտի մրցունակության բարելավման, տնտեսական գործունեության դիվերսիֆիկացման աջակցման, ինչպես նաև գյուղական վայրերի մշակութային ժառանգության պահպանման քաղաքականության իրականացման կարևոր գործընկերներ:

31.1.Առաջադրված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները՝

1) մշակել գյուղական ձեռներեցության զարգացման խթանմանն ուղղված չափանիշներ՝

ա. իրականացնել համապատասխան հետազոտություններ և մշակել ռազմավարություն և օրենսդրություն՝ ուղղված գյուղական համայնքներում տնտեսությունների դիվերսիֆիկացմանը,

բ. տրամադրել դիվերսիֆիկացման գործողություններին ուղղված ներդրումային աջակցություն՝ ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ ոչ գյուղատնտեսական գործունեության դեպքում,

գ. գյուղական համայնքներում խթանել ագրոտուրիզմի զարգացումն ըստ համայնքի մշակութային առանձնահատկությունների:

2) զարգացնել գյուղական համայնքների գյուղատնտեսական ենթակառուցվածքները՝

ա. զարգացնել առաջնային գյուղատնտեսական ենթակառուցվածքները:

3) կիրառել գյուղատնտեսական լավագույն փորձը, պահպանել կենսաբազմազանությունը և իրականացնել շրջակա միջավայրի կայուն զարգացման ծրագրեր՝

ա. մշակել և գյուղացիական տնտեսավարողների, խորհրդատուների ու քաղաքականություն մշակողների շրջանում իրականացնել գյուղատնտեսական լավագույն փորձի կիրառման վերաբերյալ իրազեկման տարբեր ծրագրեր,

բ. համակարգել գործողությունները ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ:

4) զարգացնել համայնքային կարողությունները՝ տեղական մակարդակով ռազմավարությունների իրականացման համար՝

ա. մշակել համայնքների գործողությունների ծրագրեր,

բ. աջակցել գյուղացիական տնտեսությունների և գյուղական համայնքների զարգացմանն ուղղված տեղական նախաձեռնություններին:

32. Խթանել թվային գյուղատնտեսությունը և տեխնոլոգիական նորարարությունը. Թվային գյուղատնտեսության գործիքները և ընդհանուր առմամբ տեխնոլոգիաների վրա հիմնված գյուղատնտեսական նորարարությունները ի գործու են առաջիկա տասնամյակում կտրուկ բարելավել և փոխակերպել Հայաստանի գյուղատնտեսության մրցունակությունն ու կայունությունը, միաժամանակ նաև դիմակայել գյուղատնտեսության ոլորտի առավել կարևոր ու հրատապ մարտահրավերներից շատերին:

Թվային գյուղատնտեսությունը (որը հայտնի է նաև որպես էլեկտրոնային գյուղատնտեսություն) ներառում է նորարարական տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) նախագծումը, մշակումը և կիրառումը, տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը սննդի համակարգի մի շարք խնդիրների լուծման նպատակով:

Թվային գյուղատնտեսությունը ներառում է նորարարական լուծումների նախագծման, մշակման և գործարկման միջոցով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը գյուղական համայնքներում՝ առաջնային ուշադրություն դարձնելով գյուղատնտեսությանն ու սննդարտադրությանը, ներառյալ՝ ձկնաբուծարաններին, անտառտնտեսություններին ու անասնաբուծությանը: Այս լայն հայեցակարգն ընդգրկում է տեխնոլոգիաների կիրառություն, աջակցություն ստանդարտացման և նորմավորման հարցերում, կարողությունների զարգացում, ուսուցանում և լրացուցիչ դասընթացների անցկացում: Այն ներառում է ոչ միայն Կառավարության կողմից ՏՀՏ-ների միջոցով բնակչությանը (օրինակ՝ գյուղատնտեսությամբ զբաղվողներին) տրամադրվող գյուղատնտեսական ծառայությունները, այլև մասնավոր հատվածի, հանրային հետազոտություն իրականացնող և լրացուցիչ դասընթացներ վարող կազմակերպությունների, հասարակական, գյուղացիական և միջկառավարական կազմակերպությունների կողմից մատուցվող մի շարք պրոդուկտներ, ծառայություններ ու ենթակառուցվածքներ: Թվային գյուղատնտեսության համար թիրախային տեխնոլոգիաներ կարող են լինել սարքերը, ցանցային համակարգերը, ծառայությունները և հավելվածները, ինչպես նաև տարատեսակ բազային տեխնոլոգիաները, այդ թվում՝ համացանցային հաղորդակցման տեխնոլոգիաները, հեռագրայուն սարքերը (օրինակ՝ արբանյակային և անօդաչու նկարահանող սարքեր), իրերի համացանցը և հարակից ոլորտը, ապարատային տալիչները և

միջհամակարգչային (M2M) հաղորդակցական տեխնոլոգիաները, մեծ տվյալների և դրանց վերլուծության ոլորտում նորարարությունները, ինչպես օրինակ՝ արհեստական բանականությունը (ինտելեկտ), մեքենայական ուսուցումը և վերջին շրջանի նորարարություններից՝ բլոկչեյն տեխնոլոգիաները:

Հայաստանում թվային գյուղատնտեսության գործարկման հիմնական թիրախային ոլորտներն են՝

1) գյուղացիական տնտեսավարողների համար խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների թվայնացված մատուցումը, որը ներառելու է գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ, շուկայի մասին տեղեկատվություն և նախագգուշացողական համակարգեր եղանակի, մշակաբույսերին սպառնացող վնասատուների/հիվանդությունների վտանգների մասին,

2) թվային շուկայում կապերի ստեղծումը, այսինքն՝ կստեղծվեն հարթակներ և ծառայություններ, որոնց միջոցով գյուղացիական տնտեսավարողների համար հասանելի կլինեն որակյալ գյուղատնտեսական մուտքերը, հողերը և սարքավորումները, կամ որոնք գյուղացիական տնտեսավարողներին հնարավորություն կտան կապ հաստատել տեղական ու միջազգային գնորդների հետ,

3) թվային ֆինանսական ծառայությունները, ինչպես օրինակ՝ գյուղատնտեսական ապահովագրություն, վարկավորում և վճարումներ,

4) մատակարարման ցանցի կառավարման թվայնացումը, ներառյալ՝ լոգիստիկա, սննդի անվտանգություն, հետքերքահավաքային կառավարման և հսկելիության/հավաստագրման համակարգեր,

5) մակրոգյուղատնտեսական գրագիտության գործիքները՝ գյուղատնտեսության համակարգի ընդհանուր հսկողության, քաղաքականության ու ռեսուրսների բաշխման պլանավորման և արդյունքների մոնիտորինգի համար,

6) թվային կարողությունների զարգացում և գյուղատնտեսական հմտությունների ամրապնդում,

7) գյուղատնտեսության ոլորտի հետազոտողների, գիտական շրջանակների, գյուղական խորհրդատվական ծառայությունների, լրացուցիչ դասընթացներ վարող կազմակերպությունների, ագրարային ոլորտի գործարարների և գյուղացիական տնտեսավարողների միջև տվյալների և գաղափարների թվայնացված փոխանակումը դյուրացնող նորարարական համակարգերը:

Թվային գյուղատնտեսությունը ՀՀ գյուղատնտեսության ռազմավարության մեջ ընդգրկված գյուղատնտեսական նորարարությունների միայն մեկ ենթահամակարգն է: Որոշ նորարարություններ համադրում են թվային և այլ տեխնոլոգիաներ, ինչպես օրինակ՝ ճշգրիտ գյուղատնտեսությունը, ռոբոտան, ջերմատների կառավարման, հողերի և մշակաբույսերի ախտորոշման «խելացի» լուծումները, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումն ու ավտոմատացումը, որոնք միավորում են թվային կապը, իրերի համացանցի տպիչները՝ ի թիվս տեխնոլոգիական այլ նորամուծությունների: Գյուղատնտեսության ոլորտի նորարարություններից շատերն ինքնին թվային չեն, ինչպես օրինակ՝ կենսատեխնոլոգիայի տարբեր տեսակները (օրինակ՝ բարելավված սորտեր), քիմիական նյութերը (օրինակ՝ նոր թունաքիմիկատները/հերբիցիդներ), էներգիան (օրինակ՝ արևային ինքնավար ցանցային համակարգեր), նյութագիտությունը (օրինակ՝ ջերմատների կառուցման համար օգտագործվող շինանյութ), մշակաբույսերի պաշտպանությունը (օրինակ՝ հակակարկտային ցանցեր) և հողագործության ոլորտի նորարարությունները (օրինակ՝ առանց հողի, անվար և ուղղահայաց մշակության համակարգեր):

Գյուղատնտեսության թվայնացումը և Հայաստանում այս նորարարություններից շատերի կիրառումը, ի թիվս այլ դրական արդյունքների, կհանգեցնեն զգալիորեն ավելի բարձր

արտադրողականության, կլիմայի փոփոխությունների և այլ վտանգների նկատմամբ դիմացկունության բարձրացման, բարձրակարգ շուկաներ մուտք գործելու և շուկայական կապերի նոր հնարավորությունների ընդլայնման, սննդամթերքի որակի և արժեչղթաներում ռեսուրսօգտագործման բարելավման ու ծախսարդյունավետության բարձրացման: Առաջնահերթ գյուղատնտեսական արժեչղթաներում դրական արդյունքներից մի քանիսը տեսանելի կլինեն սեղմ ժամկետներում: Իսկ ավելի շատ դրական արդյունքների համար, ինչպես նաև Հայաստանի մրցունակությունն ապահովելու նպատակով կպահանջվեն երկար տարիների կայուն ներդրումներ և հրատապ գործողություններ:

Ի վերջո, թվային և այլ տեխնոլոգիաների կիրառումը կհանգեցնի գյուղացիական տնտեսավարողների բարձր եկամուտների կայունության աճի, ինչպես նաև տնտեսական առավել նպաստավոր պայմաններ կստեղծի ագրարային ոլորտի գործարարների ու ներդրողների համար: Ավելի բարձր մակարդակում թվայնացումը և նորարարությունը կհանգեցնեն ՀՀ գյուղատնտեսության ՀՆԱ ցուցանիշի աճի ավելի արագ տեմպերին, գյուղատնտեսության ոլորտում ներգրավված հանրային կառույցների ավելի արագ արձագանքմանը, իրազեկվածության և ծախսարդյունավետության, գյուղատնտեսության մեջ կանանց ու երիտասարդների ներգրավվածության և շրջակա միջավայրի կայունության բարձրացմանը (օրինակ՝ ջրօգտագործում) և կլիմայի պահպանությանը, սննդի անվտանգության բարելավմանը, և, որ ուշագրավ է, գյուղատնտեսական արտադրության մեջ և այլ հարակից տնտեսական, ինչպես օրինակ՝ ագրոարտադրության, սննդի մեծածախ և մանրածախ վաճառքի, տրանսպորտի, լոգիստիկայի, ֆինանսների, ՏՀՏ և զբոսաշրջության ոլորտներում նոր աշխատատեղերի ստեղծմանն ու խթանմանը:

Այսպիսով՝ թվայնացումը և նորարարությունը միջոլորտային դերակատարներ են ՀՀ կառավարության՝ գյուղատնտեսության ոլորտի

ժամանակակից, ներգործուն և գիտելիքահեն տեսականի համար: Դրանք, այնուամենայնիվ, համադարման չեն մեր երկրի գյուղատնտեսության ոլորտի բոլոր խնդիրների համար: Որպեսզի թվային և մյուս տեխնոլոգիաներն առավել արդյունավետ լինեն, կպահանջվեն շատ այլ բարեփոխումներ և ենթակառուցվածքային ներդրումներ: Ավելին՝ թվային և այլ տեխնոլոգիաների կիրառումն անկախ նպատակ չէ. այն պարզապես ՀՀ գյուղատնտեսության ռազմավարության կարևոր գործիքակազմ է գյուղատնտեսության ոլորտի կարևորագույն մարտահրավերներին դիմակայելու և ռազմավարական այս փաստաթղթի նախորդ բաժիններում նշված հնարավորությունների կիրառմանն օժանդակելու համար:

Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում տեխնոլոգիական նորարարությունների ներդրումը պարզապես միայն ապագայի ձգտում չէ: Այս ոլորտում արդեն իսկ կան որոշակի համեմատական առավելություններ, որոնց շնորհիվ կարելի է մոտ ապագայում արագորեն շոշափելի արդյունքներ գրանցել թվայնացման և տեխնոլոգիական նորարարական նախաձեռնությունների ուղղությամբ և տարածաշրջանային մակարդակում միջին ժամկետներում մրցունակություն դրսևորել որպես գյուղատնտեսական տեխնոլոգիաների առաջատար երկիր:

Նախ և առաջ Հայաստանի շոշափելի առավելությունը բարձրորակ բջջային կապն է, որը բնորոշվում է բջջային հզոր աշխարհագրական ծածկույթով (100 % 3G ծածկույթ, >50 % 4G LTE ծածկույթ՝ հիմնականում քաղաքային վայրերում), բջջային հեռախոսի օգտագործման գրեթե համընդհանուր մակարդակով (97 %) և բջջային ինտերնետ կապի հասանելիության շատ բարձր մակարդակով (~88 %)՝ երկրի նույնիսկ ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների կեսից ավելիի կողմից ինտերնետային կապի ամենօրյա կամ շաբաթական օգտագործմամբ:

Երկրորդ՝ Հայաստանն ունի փոքր, բայց խիստ փորձառու ՏՀՏ և տեխնոլոգիական ոլորտ, որը գործում է ինչպես տեղական ստարտափերի,

այնպես էլ Մայքրոսոֆթի նման հսկա միջազգային տեխնոլոգիական կազմակերպության մակարդակում: Հայ ՏՏ ծրագրավորողների, բարդ տվյալների վերլուծությամբ զբաղվող հայկական ընկերությունների և ճշգրիտ սարքակազմեր արտադրողների աճող բազան (ներառյալ Հայաստանում գործող նորարարական գյուղատնտեսական ուղղվածությամբ մի քանի ընկերություններ, որոնք մասնագիտացած են հեռակառավարվող հսկողության, անօդաչու սարքերի, դաշտային տալիչների, ավտոմատացման և ծրագրակազմերի ստեղծման ուղղությամբ) Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի թվային ու տեխնոլոգիական նորարարական լուծումները մշակելու, համապատասխանեցնելու և խթանելու բացառիկ կարողունակություն ունի:

Երրորդ՝ Հայաստանը մեծ առաջնահերթություն է տվել ՏՀՏ ոլորտին և թվայնացմանը՝ որպես երկրի համընդհանուր զարգացման ռազմավարության բաղադրիչ: Այս դիրքորոշումը վերահաստատել է նաև ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նորաստեղծ նախարարությունը, ուստի թվային գյուղատնտեսության մեջ կատարվող ցանկացած ներդրում զուգահեռ աջակցություն կստանա նաև տնտեսության այլ ոլորտներից (օրինակ՝ հեռահաղորդակցային օպերատորներն ու ֆինանսական հաստատությունները ստեղծում են թվայնացված վճարումների ենթակառուցվածքներ և ավելացնում դրանցում կատարվող ներդրումները):

Եվ, ի վերջո, Հայաստանը կարող է հպարտանալ տնտեսության այլ ոլորտներում կիրառվող էլեկտրոնային կառավարման դրական փորձով, ինչպես օրինակ՝ հաջողած էլեկտրոնային բիզնես-ռեգիստրը և էլեկտրոնային առողջապահության ազգային հարթակը, որոնք լավ նախադեպ են գյուղատնտեսության համար:

Գյուղատնտեսության ոլորտում թվային կամ այլ նորարարությունների գործարկումը, այնուամենայնիվ, ունի իր մարտահրավերները: Գյուղատնտեսության թվայնացումը դեռևս

համեմատաբար քիչ է կիրառվում, և յուրացման մակարդակը շատ ցածր է: Նախկինում երկրում գործարկված թվային գյուղատնտեսական մի շարք լուծումներ, որոնք հիմնականում իրականացվել են դոնորների ֆինանսավորմամբ, ձախողվել են գյուղացիական տնտեսավարողների և գործարարների կողմից դրանց թերի կիրառման կամ շարունակական ֆինանսավորման բացակայության և կոմերցիոն սակավ կայունության պատճառով: Ներկայումս գործող լուծումները փոխգործունակ չեն, և դժվար կլինի դրանք ինտեգրել կենտրոնացված թվային գյուղատնտեսության ☐ էկոհամակարգում ☐: Գյուղացիական տնտեսավարողների ու ագրարային ոլորտի գործարարների՝ որպես վերջնական օգտագործողների մակարդակում թվային գյուղատնտեսության կամ գյուղատնտեսական տեխնոլոգիաների նոր տեսակների մասին իրազեկվածության մակարդակն ընդհանուր առմամբ ցածր է՝ հատկապես փոքր գյուղացիական տնտեսությունների դեպքում: Եվ, ինչու՞ ոչ, հանրային վերաբերմունքը հակված է խոչընդոտելու տեխնոլոգիաների ներմուծմանը. առավելապես խնդրահարույց են խիստ պահպանողական վերաբերմունքը նոր տեխնոլոգիաների ներմուծման նկատմամբ և փոքր գյուղացիական տնտեսությունների վստահության ցածր մակարդակը:

Հիմք ընդունելով հաջողություններից և անհաջողություններից քաղած դասերը և համաձայն այս ռազմավարական փաստաթղթի այլ բաժիններում ձևակերպված առաջնահերթությունների՝ ՀՀ կառավարությունը հանրային հիմնական օգուտների ստեղծման և գործելակերպային միջոցառումների միջոցով կխթանի գյուղատնտեսության թվայնացման և նորարարական տեխնոլոգիաների օրակարգը:

Միջոցառումների իրականացման հիմնական մեխանիզմներն են՝

1) ներդրումներ թվային գյուղատնտեսության առաջնային ենթակառուցվածքներում (օրինակ՝ գյուղացիական տնտեսությունների, մշակովի հողերի, կենդանիների գլխաքանակի հաշվառման ռեգիստրներ),

2) թվային և նորարարական ☐ էկոհամակարգը ☐ վաղ որդեգրողների համար ռիսկերի նվազեցման և տեսանելի արդյունքների խթանման շարժառիթներ (օրինակ՝ նպատակային դրամաշնորհների և կոնցեսիոն վարկերի տրամադրում նորարարության ծրագրավորողներին, խթանողներին և նոր տեխնոլոգիաներ որդեգրող գյուղացիական տնտեսավարողների),

3) ռազմավարությունների և կանոնակարգերի կիրառման խթանում (օրինակ՝ գյուղատնտեսության տվյալների պաշտպանության կանոնակարգեր),

4) նախարարության գյուղատնտեսության սեկտորի գործունեության թվայնացում՝ սկսած վճարումներից մինչև տեղեկատվության հավաքագրում և տարածում,

5) գյուղացիական տնտեսավարողների և ագրարային ոլորտի գործարարների համար իրազեկման, գիտելիքի փոխանակման և կարողությունների զարգացման ծրագրեր, ներառյալ՝ աջակցություն փոքր գյուղացիական տնտեսությունների սեփականատերերին՝ թվային տեխնոլոգիաների և գյուղատնտեսական այլ նորարարությունների կիրառումից օգուտ ստանալու ուղղությամբ,

6) հանրաճանաչելիության ու գործընկերային հարաբերությունների ձևավորմանն ուղղված գործողություններ՝ ներգրավելով նաև դոնորներին, մասնավոր հատվածի տեխնոլոգիական ընկերություններին, խոշոր գործարարներին, համապատասխան նախարարություններին և գյուղատնտեսության ոլորտում անմիջական գործունեություն չիրականացնող պետական մարմիններին:

Մասնավորապես՝ գյուղատնտեսության ռազմավարության թվային և նորարարական բաղադրիչները չորսն են՝

1) Ներդրումների իրականացում թվային գյուղատնտեսության ազգային հարթակներում և թվայնացման նախաձեռնություններում: Թվային գյուղատնտեսական նորամուծությունները կարող են փոփոխություններ առաջացնել միայն այն դեպքում, եթե դրանք դառնան ամբողջական տեսլականի մի մասը և իրականացվեն ռազմավարական եղանակով: Նախկինում ՀՀ կառավարությունն այս հարցերի նկատմամբ կենտրոնացված մոտեցում չի ցուցաբերել, ինչն էլ խոչընդոտ է դարձել նախկին նախաձեռնությունների և ծրագրերի համար:

Հետևաբար բիզնեսի առաջխաղացման առաջին քայլը կլինի թվային գյուղատնտեսության միասնական տեսլականի, ռազմավարության և միջոցառումների ծրագրի մշակումն ու համակարգումը կառավարական գործընկերների ու փորձագետների աջակցությամբ՝ խորհրդակցելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտի տարբեր դերակատարների (օրինակ՝ մասնավոր հատված, գիտական շրջանակներ) և էլեկտրոնային կառավարման շահագրգիռ կողմերի ավելի լայն շերտերի հետ, ինչպիսին օրինակ՝ EKENG-ն է:

Թվայնացման անմիջական ռազմավարական առաջնահերթությունների որոշումից հետո հաջորդ քայլը կլինի հիմնարար թվային գյուղատնտեսական հարթակների փուլային ձևավորումն ու տարածումը:

Ըստ էլեկտրոնային գյուղատնտեսության ռազմավարության գործընթացի հետագա վավերացման՝ նման ներդրումները, ամենայն հավանականությամբ, կներառեն՝

ա. գյուղացիական տնտեսությունների թվային ռեգիստր,

բ. գյուղատնտեսական նշանակության հողերի ռեգիստր (կցված կադաստրային ազգային տվյալներին) և, հնարավորության դեպքում,

հողերի առքուվաճառքի հարթակ՝ լքված հողերի հետ կապված մարտահրավերների լուծման նպատակով,

գ. կենդանիների հաշվառման ու շարժի վերահսկման ազգային համակարգ,

դ. հեռահար զոնդավորման ազգային «գյուղատնտեսական դիտարան», որը միաժամանակ տրամադրում է արբանյակային պատկերներ և եղանակային տվյալներ մակրոագրոհետախուզության, վաղ ազդարարման նկատմամբ վերահսկողության (օրինակ՝ վնասատուների/հիվանդությունների և կլիմայի նկատմամբ վերահսկողություն) և գյուղերում խորհրդատվության, ինչպես նաև քաղաքականության պլանավորման (օրինակ՝ ցանքատարածքների քարտեզագրման և բերքատվության կանխատեսումների) համար:

Թվային ենթակառուցվածքների համար դիտարկվող կարճաժամկետից մինչև միջնաժամկետ ներդրումներից են՝

ա. շուկայի վերաբերյալ տեղեկությունների (օրինակ՝ հումքի և ապրանքի գինը) հավաքագրման և տարածման համակարգը,

բ.ռոռզման ռեգիստրը՝ միացված ջրային ռեսուրսների քարտեզագրման ազգային համակարգին, որը կարող է ձևավորվել այս ոլորտում նախկինում իրականացված աշխատանքների հիման վրա,

գ.սննդի անվտանգության/բուսասանիտարական վերահսկողության թվայնացված համակարգը,

դ.գյուղացիական տնտեսությունների խորհրդատվական թվային ծառայությունները և գիտելիքների փոխանակման ազգային հարթակը, ինչպես նաև այդ ուղղությամբ խորհրդատվություն իրականացնող դերակատարների ակտիվների մասին տվյալները,

ե.գյուղատնտեսական վճարների թվայնացման ազգային նախաձեռնությունը (Կառավարությունից դեպի անհատ (G2P), Կառավարությունից դեպի գյուղացի վճարումներ, ինչպես նաև

գյուղացիների համար էլեկտրոնային դրամապանակի հնարավոր ավելի լայն և նմանատիպ այլ հաշիվներ):

Կառավարությունը ներդրումներ կկատարի թվայնացման նման նախաձեռնությունների իրագործելիության ուսումնասիրություններ կատարելու համար. դրանցից առավել կարևոր է գյուղատնտեսության ոլորտում վճարների թվայնացման իրագործելիության ուսումնասիրությունը՝ հաշվի առնելով անմիջական ծախսերի խնայողության և վճարումների վերահսկողության բարելավման հնարավորությունը մյուս բոլոր միջոցառումների համար, որոնք նոր ռազմավարությամբ ներառում են պետական վճարներ գյուղացիական տնտեսություններին և ագրոբիզնեսին:

Հաշվի առնելով թվային գյուղատնտեսական նախաձեռնությունների ոլորտում նախկին ձախողումները՝ թվային բոլոր ներդրումների համար իրագործելիության ուսումնասիրության և նախագծման գործընթացի կարևորագույն մասն են կազմելու մարդակենտրոն հետազոտություններն ու խորհրդակցությունները, որպեսզի ցանկացած նոր լուծում բխի գյուղատնտեսների և խորհրդատուների կարիքներից, ցանկություններից ու մտահոգություններից: Ավելին, յուրաքանչյուր ներդրում մանրագնին կուսումնասիրվի, որպեսզի իրականացվի ֆինանսական կայունության ապահովման և/կամ շարունակական պետական ծախսեր պահանջող լուծումների կենսունակության իրատեսական գնահատում:

Կառավարության կողմից թվային ենթակառուցվածքներում կատարվող ներդրումների հետ մեկտեղ՝ նախարարությունը կմշակի և կներդնի նորարարական դրամաշնորհների և վարկերի աջակցության ծրագրեր մասնավոր հատվածի նախագծերի համար, որոնք թվային տեխնոլոգիաները կիրառում են խիստ գերակա արժեշտներում, հատկապես՝ մասնավոր հատվածի նախաձեռնություններում (օրինակ՝ շուկաների կապի թվային հարթակներ), որոնք ինտեգրվում են Կառավարության թվային ենթակառուցվածքների ծրագրերի հետ:

Վերջապես, նախարարությունը պետական այլ գերատեսչությունների հետ կմշակի համապատասխան միջոցառումներ, որոնք կապահովեն կառավարության կողմից իրականացվող, ինչպես նաև մասնավոր հատվածի կողմից մշակված թվային գյուղատնտեսական նախաձեռնություններում գյուղացիների տվյալների գաղտնիության և կիբեռանվտանգության ապահովումը:

2) Գյուղատնտեսության ոլորտում առավել լայնամասշտաբ (ոչ թվային) նորամուծությունների խթանում ու դրանց ներդրում

Հայաստանի էլեկտրոնային գյուղատնտեսության ռազմավարությունից զատ՝ Կառավարությունը նաև գործընկերների և փորձագետների հետ կմշակի գյուղատնտեսական առաջնահերթ նորամուծությունների ճանապարհային քարտեզն ու միջոցառումների ծրագիրը:

Քաղաքականության և աջակցության տարբեր միջոցառումների (մասնավորապես՝ ցուցադրական ծրագրերի և առավել կոմերցիոն գյուղացիական տնտեսությունների ու ագրոբիզնեսի տեխնիկական աջակցության/կարողությունների զարգացման ծրագրերի համար նախատեսված նորարարական դրամաշնորհներ և վարկային աջակցության ծրագրեր) շնորհիվ Կառավարությունը կաջակցի գերակա նորամուծություններին:

Աջակցության նման ծրագրերի համար դիտարկվող բարձր տեխնոլոգիաները ներառում են՝

ա. ապագայի այգեգործական ջերմատներ, այդ թվում՝ ժամանակակից ջերմատների նյութեր, այլընտրանքային էներգիայի աղբյուրներ (կենսագազի և արևային էներգիայի ինքնավար (ավտոնոմ) համակարգ), ինչպես նաև ջերմատների ինտերնետային (IoT) մոնիտորինգի ու վերահսկման համակարգեր,

բ.բարձր արդյունավետությամբ և ցածրարժեք հակակարկտային պաշտպանության նորամուծություններ,

գ. կենսատեխնիկական նորամուծություններ (այսինքն՝ ուժեղ մրցունակության և կլիմայի փոփոխությունների նկատմամբ կայուն նոր սորտերի ուսումնասիրություն և ներդրում),

դ. արտադրական գործընթացի մեքենայացման հետ կապված նորամուծություններ, այդ թվում՝ ոռոգման նորարարական լուծումների իրականում (օրինակ՝ կաթիլային ոռոգում), դաշտի նախապատրաստում (օրինակ՝ խելացի տրակտորների միջոցով հերբիցիդների, թունաքիմիկատների և պարարտանյութերի ցրման աշխատանքների ավտոմատացում) և բերքահավաքի տեխնոլոգիաների ավտոմատացում,

ե. բերքահավաքին հաջորդող աշխատանքների մեքենայացման նորամուծություններ (օրինակ՝ սառը շղթայի և պահեստավորման նոր տեխնոլոգիաներ, փաթեթավորման նորամուծություններ),

զ. արդիականացված ագրոախտորոշման տեխնոլոգիաներ (օրինակ՝ հողի, բերքի և հումքի ստուգման նոր շարժական սկաներներ):

Նախաձեռնությունների և ներդրումների այս պորտֆելի կառավարումը, ամենայն հավանականությամբ, կպահանջի ազգային և մարզային մակարդակներում ազգային գյուղատնտեսական տեխնոլոգիաների ցուցադրական ծրագրերի և ցուցադրական կենտրոնների ձևավորման, աջակցման ու իրականում նոր համակարգի մշակում:

3) Կառավարության գյուղատնտեսական համակարգերի թվայնացում և նախարարության թվային ու նորարարական կարողությունների զարգացում

Թվային տեխնոլոգիաներն ու նորարարական նախաձեռնությունները կառավարելու համար Կառավարությունը պետք է անհապաղ ներդրումներ կատարի նախարարության այս ոլորտի կարողությունների զարգացման և դրա հետ կապված էլեկտրոնային կառավարման ծրագրերի, հարթակների ու տվյալների ակտիվների մեջ:

Անհետաձգելի քայլերից մեկը կլինի նախարարության աշխատակազմում թվային գյուղատնտեսության և նորամուծությունների վարչության հիմնումն ու զարգացումը, ինչպես նաև նախարարության ՏՏ և տվյալների (գյուղացիական տնտեսությունների ռեգիստր, ոռոգման ռեգիստր, կենդանիների, հողամասերի նույնականացում, վճարների վերահսկում և այլն) վերլուծության կարողությունների զարգացումը, գյուղատնտեսությամբ զբաղվող վարչական կառույցների թվայնացումը (օրինակ՝ ազգային խորհրդատվական ենթակառուցվածքների, ներառյալ՝ խորհրդատվական ապակենտրոնացված կենտրոնների թվայնացում), գյուղատնտեսության վիճակագրության թվայնացման զգալի առաջընթացը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հետ համատեղ (օրինակ՝ գյուղատնտեսական բաց տվյալների աղբյուրների թվայնացում և ինտեգրում մեկ հարթակում, նոր թվայնացված տվյալների հավաքագրում՝ իրական ժամանակում ավելի մեծ քանակությամբ տվյալների ստացման համար, Կառավարության և հանրության համար տվյալների հասանելիության բարելավում):

Մյուս միջոցառումը թվային գյուղատնտեսության ոլորտում գործընկերությունների ձևավորումն է ազգային և ԵՄ/ԵԱՀՄ հետազոտական նախագծերի ու ծրագրերի (օրինակ՝ ԵՄ Կոպեռնիկոս ծրագիրը) և համապատասխան այլ մարմինների (օրինակ՝ ՀԲ գյուղատնտեսական դիտարան) հետ: Նախարարությունը նաև կուսումնասիրի ազգային ագրոնոմիական համակարգերի թվայնացման հնարավորությունները (օրինակ՝ հողերի ստուգման և դաշտերի փորձարկման ենթակառուցվածքների թվայնացում ու արդիականացում)՝ որպես Հայաստանի ապագայի համար առավել ռացիոնալ և կապակցված գյուղատնտեսական նորամուծությունների համակարգի մաս:

4) Գյուղացիների և կրթական համակարգի կարողությունների զարգացում թվային գյուղատնտեսության և նորամուծությունների ոլորտներում: Գյուղատնտեսության թվայնացման և նորարարական բոլոր

նախաձեռնությունների հաջողությունը մեծապես կախված կլինի գյուղացիների իրազեկվածությունից, վստահությունից և կարողությունից:

Այս նպատակով նախարարությունը կիրականացնի մի շարք միջոցառումներ՝ սկսած ռազմավարական հաղորդակցության ծրագրի մշակումից՝ խթանելու զանգվածային թվայնացման անմիջական նախաձեռնությունները, ինչպես օրինակ՝ գյուղացիական տնտեսավարողների ազգային գրանցման հարթակի գործարկումը և գյուղացիական տնտեսավարողների գրանցման գործընթացը:

Մոտ ապագայում կկարևորվեն թվային գյուղատնտեսության և նորամուծությունների վերաբերյալ իրազեկման և գովազդման նախաձեռնությունները գյուղացիական տնտեսավարողների և գյուղական փոքր բիզնեսի շրջանում (օրինակ՝ գիտաժողովներ, տեխնոլոգիական խթանման ծրագրեր գյուղատնտեսական գիտական հաստատությունների հետ, գյուղատնտեսությամբ զբաղվողների կրթական/խորհրդատվական ծրագրերի համար նոր բովանդակության մշակում):

Մասնավորապես՝ խրախուսման և աջակցման միջոցով պետք է զարգացվեն փոքր գյուղացիական տնտեսությունների կարողությունները, որպեսզի վերջիններս ընդունեն հատուկ իրենց կարիքներին և սահմանափակումներին հարմարեցված թվային տեխնոլոգիաներն ու նորամուծությունները: Դա հնարավոր կլինի պետության և մասնավոր հատվածի համագործակցության, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության ներգրավվածության արդյունքում:

Փոքր գյուղացիական տնտեսությունների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներից են՝

ա. համապատասխան նորամուծությունների ընտրման և հարմարեցման նախաձեռնությունները՝ փոքր գյուղացիական տնտեսությունների մասնակցությամբ (օրինակ՝ փոքր գյուղացիական տնտեսությունների գործելակարգին և միջոցների սահմանափակումներին համապատասխանող սարքավորումներ),

բ. թվային տեխնոլոգիաների և այլ նորամուծությունների օգտագործման նպատակով հանրակրթական հիմնական ծրագրերում դաշտային ուսուցումների ներդրումը,

գ. գյուղատնտեսական նորամուծությունների համակարգում կանանց և երիտասարդության ներգրավվածությունը խթանող նախաձեռնությունների և լուծումների մշակումը,

դ. ապակենտրոնացված (այսինքն՝ մարզային) համայնքային նորարարական կենտրոնների ստեղծումը՝ թվային և այլ նորարարական գյուղատնտեսական տեխնոլոգիաներում տեղական կարողությունները զարգացնելու նպատակով:

Ընդհանուր ☐ Էկոհամակարգի ☐ կարողությունների խթանման առավել երկարաժամկետ միջոցառումներից են՝

ա. գիտահետազոտական ինստիտուտների, գիտական շրջանակների, գյուղատնտեսական արտադրողների և տեղի տեխնիկական/SS համայնքի միջև կապի ամրապնդումը,

բ. համապատասխանեցված թվային գյուղատնտեսության և այլ նորամուծությունների վերաբերյալ տեղեկատվության ներմուծումը գյուղատնտեսական ուսուցման ծրագրերում/կրթական համակարգերում,

գ. գյուղատնտեսության մեջ կանանց և երիտասարդների ներգրավման նպատակով գործընկերների (օրինակ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, դոնորների ֆինանսավորմամբ իրականացվող տեխնիկական և մասնագիտական կրթության ու ուսուցման ծրագրեր գյուղատնտեսության ոլորտում) հետ համատեղ նորարարական էլեկտրոնային ուսումնառության հարթակների մշակումը:

32.1. Առաջադրված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները՝

1) ներդրումներ կատարել ազգային թվային գյուղատնտեսության հարթակների ստեղծման ու թվայնացման նախաձեռնություններում՝

ա. մշակել թվային գյուղատնտեսության ռազմավարություն և գործողությունների պլան,

բ. ներդրումներ կատարել թվային գյուղատնտեսության այնպիսի հարթակների փուլային նախագծման և ներդրման ուղղությամբ, ինչպիսիք են գյուղացիական տնտեսությունների, հողի, կենդանիների և ոռոգման ռեզիստրները, վերահսկողական ու հետագծային հսկողության հարթակը, չմշակվող հողատեսքերի վաճառքի հարթակը, պլանավորմանն ու մոնիտորինգին ուղղված թվային դիտակայանը, ցանքատարածությունների քարտեզագրումը և բերքի կանխատեսումը,

գ. իրականացնել իրագործելիության ուսումնասիրություն՝ թվային ներդրումներն ու նախաձեռնություններն ըստ առաջնահերթության սահմանելու նպատակով. օրինակ՝ գնահատել գյուղատնտեսական վճարումների թվայնացման իրատեսությունը՝ սկսած Կառավարություն-անհատ վճարումներից (օրինակ՝ ազգային գյուղացիական տնտեսավարողի առցանց դրամապանակ), որը կարող է հիմք հանդիսանալ ապագա թվային վճարումների ներդրման համար (օրինակ՝ գյուղացիական տնտեսավարող-բիզնես, ապահովագրություն, վարկի վճարում),

դ. իրականացնել ներդրումներ նոր քաղաքականության մշակման ուղղությամբ՝ անվտանգ և պաշտպանված թվային գյուղատնտեսության երաշխավորման նպատակով (օրինակ՝ գյուղատնտեսական տվյալների անձեռնմխելիության ապահովմանն ուղղված նոր օրենսգրքի մշակում):

2) խթանել առավել համապարփակ (ոչ թվային) գյուղատնտեսական, տեխնոլոգիական նորարարությունն ու զարգացումը՝

ա. մշակել գյուղատնտեսական նորարարության ճանապարհային քարտեզ և գործողությունների պլան՝ ըստ առաջնահերթությունների

(թվայինից բացի), որը կնպաստի ազգային գյուղատնտեսական ռազմավարության իրականացմանը,

բ. խթանել գյուղատնտեսական նորարարությանն ուղղված նախաձեռնություններն ու ծրագրերը տարաբնույթ քաղաքականության և գործիքակազմի միջոցով, օրինակ՝ ապագայի ջերմատներ, կարկտապաշտպան համակարգեր, բիոտեխնիկական, բերքահավաքին հաջորդող և արտադրական գործընթացների ավտոմատացման նորարարություններ (օրինակ՝ նորարարության խթանում ռոռզման, հողատարածքի նախապատրաստման, ցանքի, պահեստավորման, փաթեթավորման ոլորտներում), ժամանակակից գյուղատնտեսական «դիագնոստիկ» տեխնոլոգիաներ:

3) թվայնացնել Կառավարության գյուղատնտեսական համակարգերը և զարգացնել նախարարության թվային կարողությունները՝

ա. Նախարարության կառուցվածքում կազմավորել և զարգացնել թվային գյուղատնտեսության և նորամուծությունների վարչություն,

բ. զարգացնել նախարարության ՏՏ և տվյալների վերլուծությանն ուղղված կարողությունները՝ կանոնակարգելու ընթացիկ, ինչպես նաև ապագայում սպասվող տվյալների բազաների ակտիվները (գյուղացիական տնտեսությունների, ռոռզման, անասնազխաքանակի ռեզխստրները, հողամասերի նույնականացման աշխատանքները, վճարները, վերահսկողությունը և այլն),

գ. թվայնացնել այն կառավարչական կառույցները, որոնք անմիջականորեն կապված են գյուղատնտեսության հետ,

դ. թվայնացնել գյուղատնտեսական վիճակագրությունը՝ նախապես համակարգելով ՀՀ վիճակագրական կոմիտեի հետ (օրինակ՝ գյուղատնտեսական բաց տվյալների աղբյուրների թվայնացում և հավաքագրում մեկ միասնական հարթակում, նոր թվայնացված տվյալների արտահանման գործընթացների ներդրում՝ ուղղված առավել իրական

ժամանակով տվյալների ստացմանը, Կառավարության և հանրության համար տվյալների հասանելիության բարձրացում),

ե. հիմնել թվային գյուղատնտեսությանն ուղղված համագործակցություն ազգային և ԵՄ/ԵԱՀԿ հետազոտական նախագծերի և ծրագրերի (օրինակ՝ ԵՄ Կոպեռնիկոս ծրագիրը), ինչպես նաև այլ համապատասխան մարմինների հետ (օրինակ՝ ՀՄ գյուղատնտեսական դիտարան),

զ. ուսումնասիրել ազգային ագրոնոմիական համակարգի թվայնացման հնարավորությունները (օրինակ՝ հողի փորձաքննության և դաշտի փորձարկման ենթակառուցվածքների թվայնացում և նորացում):

4) Զարգացնել թվային գյուղատնտեսությանն ու նորարարությանն ուղղված ագրարային և կրթական համակարգի կարողությունները՝

ա. մեկնարկել նախաձեռնություններ, որոնք միտված են գյուղատնտեսական տեխնոլոգիաների վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացմանը (օրինակ՝ գիտաժողովներ, ազգային գյուղատնտեսական ակադեմիական կառույցների հետ համատեղ տեխնոլոգիական խթանման ծրագրեր, գյուղացիական տնտեսավարողների կրթության/վերապատրաստման ծրագրեր),

բ. ամրապնդել հետազոտական ինստիտուտների, ակադեմիական կառույցների, գյուղատնտեսական արտադրողների և տեղական տեխնոլոգիական/ՏՏ համայնքի միջև առկա կապերը՝ գյուղատնտեսական արտադրությունում խթանելու նորարարական լուծումները,

գ. գյուղատնտեսական վերապատրաստման դասընթացներին/ուսումնական պլաններին ավելացնել նոր ուղղություններ ժամանակակից գյուղատնտեսական տեխնոլոգիաների և թվային նորարարության վերաբերյալ,

դ. աջակցել նորարարական առցանց ուսուցման հարթակների զարգացմանը՝ գյուղաբնակ երիտասարդներին ներգրավելու նպատակով

(օրինակ՝ գյուղատնտեսության վերաբերյալ առցանց մասնագիտական ծրագրերի ստեղծում):

4. ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

33. Ռիսկերն այն արտաքին կամ ներքին իրադարձություններն են, որ կարող են տեղի ունենալ ռազմավարության իրականացման ընթացքում և վտանգ ներկայացնել ռազմավարության նպատակների իրագործման կամ ռազմավարության իրականացման համար: Այս բաժնում ներկայացված են ռիսկերի գնահատման և մեղմացման մեխանիզմները. դրանք այն ռիսկերն են, որոնք կարող են բացասաբար ազդել ռազմավարության իրականացման վրա: Ռազմավարության սահուն և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով Նախարարությունը պետք է մշակի և գործի դնի ռիսկերի ռազմավարական գնահատման և մեղմացման պլան, որը քաղաքականության արդյունքների գնահատման աղյուսակի, գործողությունների պլանի և ծախսերի գնահատման, ինչպես նաև գնահատման համակարգի և ռազմավարական մոնիտորինգի հետ միասին կլինի հիմնական գործիքներից մեկը:

Ռազմավարության իրականացման ռիսկերն են՝

- 1) քաղաքական,
- 2) միջավայրային,
- 3) գործառնական,
- 4) ֆինանսական:

Վերոնշյալ ռիսկերը գնահատվելու են ըստ ռիսկի առաջացման հավանականության՝

- 1) հավանականության բարձր աստիճան,
- 2) հավանականության միջին աստիճան,
- 3) հավանականության ցածր աստիճան,

և ըստ ռիսկի ազդեցության՝

- 1) ազդեցության բարձր մակարդակ,
- 2) ազդեցության միջին մակարդակ,
- 3) ազդեցության ցածր մակարդակ:

Ռազմավարական ռիսկերի գնահատումը թույլ է տալիս ստեղծել ռիսկի կառավարման/մեղմացման չափորոշիչների աղյուսակ և մշակել այդ ռիսկերի կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված գործողություններ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Ռիսկերի գնահատում և մեղմում

	Ռիսկ	Տեսակ	Ազդեցություն	Հավանականություն	Կառավարման/մեղմացման չափորոշիչներ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ					
Ք 1	Շուկայի որոշակի մասի կորուստ՝ ըստ քաղաքական դրդապատճառների	Քաղաքական	Բարձր	Միջին	Արտաքին շուկայի դիվերսիֆիկացում
Ք 2	Կառավարությունում գործող ոչ բոլոր քաղաքականություն մշակողներն են բարեփոխումների ջատագով, ինչը շփոթեցնող ազդանշան է մասնավոր հատվածի համար	Քաղաքական	Միջին	Միջին	Անկախ փորձագիտական խմբի ստեղծում, որը կգրառվի գյուղատնտեսական քաղաքականության, ինչպես նաև այլ բարեփոխումների մոնիտորինգով
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՌԻՍԿԵՐ					
Շ Մ 1	Եղանակային պայմանների փոփոխություն և անսովոր շատ անբարենպաստ բանակլիմայական պատահարներով տարիներ	Շրջակա միջավայր	Բարձր	Բարձր	Մշտապես տեղեկացված լինելու հնարավորություն, ինչպես նաև ռիսկերի կառավարման ռազմավարության և գործիքների ստեղծում, որոնք կնպաստեն գյուղացիական տնտեսավարողների

					առավել հարմարեցմանը եղանակային պայմանների փոփոխությանը
Շ Մ 2	Սննդամթերքի արտադրության ոլորտում գլոբալացման հետևանքով կենդանիների և բույսերի՝ տարբեր հիվանդություններով վարակման հավանականության բարձրացում	Շրջակա միջավայր	Բարձր	Միջին	Սննդամթերքի անվտանգության ռիսկերի վերլուծության ուղղությամբ կարողությունների շարունակական զարգացում, հաղթահարման ռազմավարության մշակում, փոխհատուցման կառուցակարգերի և այլ մեղմացուցիչ չափանիշների ներդրում
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ					
Գ1	Արտադրության տատանումներ, որը բնորոշ է գյուղատնտեսական արտադրությանը, ինչի արդյունքում առաջանում են շուկայի և գնային տատանումներ	Շուկա	Միջին	Բարձր	Շուկայի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և առավել լայն զանգվածներին կրթելու քաղաքականության իրականացում: Շուկայի ռիսկերի կառավարման ռազմավարության ստեղծում, անհրաժեշտության դեպքում՝ գնահատման չափանիշների ներդրում
Գ2	Մասնավոր հատվածում անհրաժեշտ բարձրորակ աշխատուժի և ձեռնարկատիրական ունակությունների սղություն, ինչը խոչընդոտում է ռազմավարության արդյունավետ իրականացմանը	Մարդկային	Բարձր	Միջին	Բարձրորակ կրթության և զբաղվածության ապահովման ռազմավարություն, աշխատավարձի մրցակցային և փոխհատուցման համակարգ: Չափանիշների

					հարմարեցում մասնավոր հաստատվածի կարողություններին
Գ3	Քաղաքականության մակարդակում ռազմավարության իրականացման համար արդյունավետ և բարձրագույն կրթությամբ մարդկային ռեսուրսների սղություն	Մարդկային	Միջին	Բարձր	Մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացում, միաժամանակ նոր ռեսուրսների ներգրավում: Նախարարության անձնակազմի մշտական վերապատրաստումների կազմակերպում
Գ4	Մասնավոր հատվածի՝ փոփոխվելու և առաջընթացի պատրաստակամություն՝ դադարեցնելով անընդհատ հնի կրկնությունը	Մարդկային	Բարձր	Բարձր	Տարբեր չափորոշիչների, գործողությունների և արդյունավետ հաղորդակցման միջոցով մասնավոր հատվածի ուղղորդում դեպի նպատակաուղղված փոփոխությունների իրականացում: Լավագույն փորձի հանրայնացում
Գ5	Առաջատար մատակարարների և գնորդների՝ Հայաստան մուտք գործելու հետաքրքրվածության բացակայություն՝ ելնելով շուկայի փոքր ծավալներից	Ծուկա	Միջին	Բարձր	Վերջիններիս Հայաստանում առկա հնարավորությունների վերաբերյալ համապարփակ տեղեկատվության տրամադրում, անհրաժեշտության դեպքում նաև արտոնությունների տրամադրում: ԵԱՏՄ և ԵՄ շուկաներում ընդլայնման թիրախավորում
Գ6	Տարբեր շուկաներում գործող զանազան չափանիշների	Ծուկա	Միջին	Բարձր	Ծուկայի հասանելիությանն ուղղված չափանիշների վերաբերյալ

	առկայություն, որոնց ուղղությամբ դիվերսիֆիկացման պահանջին մասնավոր հատվածը ցանկություն չի հայտնում				տեղեկատվության տրամադրում, տեղական շուկաների չափանիշների բարձրացում և այլն
Գ7	Ստանդարտացման, սերտիֆիկացման պահանջների խստացում, որոնց գյուղացիական տնտեսավարողների զգալի մասը չի կարող կամ պատրաստ չէ հետևել	Շուկա	Միջին	Բարձր	Ստանդարտների աստիճանական իրականացում, լավ հաղորդակցման ռազմավարություն և արտադրողների կրթություն՝ ուղղված ստանդարտների իրականացմանը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ					
Ֆ 1	Ֆինանսական և դրամավարկային ճգնաժամեր Հայաստանում, Ռուսաստանում, տարածաշրջանում և աշխարհում	Ֆինանսական	Բարձր	Միջին	Համապատասխան կառավարման ռազմավարությունների միջոցով ուսումնասիրում, ժամանակին կանխատեսում և արագ արձագանքում
Ֆ 2	Պետական բյուջեից գյուղատնտեսությանը հատկացվող ֆինանսավորման սղություն	Ֆինանսական	Բարձր	Բարձր	Նոր ֆինանսական ռեսուրսներ հայթայթելու ուղղությամբ չափանիշների և ռազմավարությունների զարգացում
Ֆ 3	Ժամկետանց վարկերի բարձր մասնաբաժին և ֆինանսական հաստատությունների կողմից գյուղատնտեսական ոլորտի վարկավորման հետաքրքրվածության նվազում	Ֆինանսական	Ցածր	Ցածր	Ֆինանսական հաստատությունների հետ համատեղ բերված խնդիրների լուծմանն ուղղված ռազմավարության մշակում

Ֆ 4	Արտարժույթային ռիսկեր	Ֆինանսական	Բարձր	Միջին	Հատուկ հեջավորման կառուցակարգերի մշակում և իրականացում
--------	-----------------------	------------	-------	-------	--

5. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

34. Ռազմավարության մոնիտորինգ. Ռազմավարական մոնիտորինգի իրականացումը կանոնավոր և շարունակական բնույթ է կրում, որն իր մեջ ներառում է կառավարման և որոշումների կայացման նպատակով տեղեկատվության վերլուծություն և օգտագործում, որպեսզի հնարավոր լինի՝

1) ապահովել ռազմավարական նպատակների իրականացման գործընթացի անընդհատությունը և ճշգրտումների կատարման հաճախակիությունը,

2) աջակցել կանոնավոր հաշվետվողականության մեխանիզմների աշխատանքներին,

3) ապահովել հետադարձ կապը ռազմավարության իրականացման սկզբից մինչև հետագա մշակումն ու զարգացումը:

Ներքին մոնիտորինգը ռազմավարության իրականացման ամենօրյա կառավարման բաղկացուցիչ մասը պետք է կազմի: Նախարարությունը պարբերաբար վերահսկելու և զեկուցելու է հետևյալ հիմնական հարցերի վերաբերյալ.

1) ի՞նչ միջոցառումներ են իրականացվում, և ի՞նչ առաջընթաց է գրանցվել,

2) ի՞նչպես են օգտագործվում միջոցները ռազմավարության իրականացման ընթացքում,

3) ինչքանով են արդյունքները համապատասխանում ռազմավարական նպատակներին,

4) ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում շրջակա միջավայրում,

5) արդյո՞ք իրականացված կանխատեսումները կամ ենթադրությունները համապատասխանում են իրականությանը:

